ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՍՏԵՓԱՆՈՍ ԴԱՇՏԵՑՈՒ ԱՆՏԻՊ «ԶՐՈՒՅՑ - ԲԱՆԱՎԵՃԵՐԸ»

Հուսով եմ՝ իմ նախորդ հրապարակումներից[1] «Բանբերի» ընթերցողներին հայտնի է, որ 17-18-րդ դարերի նշանավոր բանաստեղծ, հանելուկագիր, հրապարակախոս ու նկարիչ Ստեփանոս Դաշտեցին՝ վաճառականի իր անդաստական կյանքի ընթացքում լինելով աշխարհի մի շարք երկրներում, ամենաբազմազան հարցերի շուրջ բանավիճել է տարբեր հավատքի ու համոզմունքի տեր մարդկանց հետ, քննարկել փիլիսոփայական, կրոնական, բարոյագիտական, գեղագիտական ու կենցաղային զանազան հարցեր: Այդ բանավեճերը նա հետագայում գրի է առել «զրույց - բանավեճերի» ձևով, որոնք պահպանվել ու մեզ են հասել Հռոմում «ի յերկրէն պարսից ի մեծն Հայաստանէ և ծնընդեամբ Ղափանայ» գրիչ Ասլանի՝ 1725 թ. ընդօրինակած ձեռագրով, որը ներկայումս գտնվում է Երուսաղեմի հայոց պատրիարքարանի մատենադարանում (թիվ 346):

1994-1997 թթ., աշխատելով Երուսաղեմի հայոց պատրիարքարանի Ալեք և Մարի Մանուկյանների անվան Ժառանգավորաց վարժարանում և Ընծայարանում, բախտ եմ ունեցել ընթերցելու հիշյալ ձեռագիրը[2] և ճշգրտությամբ պատճենելու այդ բոլոր «զրույց-բանավեճերը»: Մինչև օրս հրապարակել եմ դրանցից երեքը (1-ին, 5-րդ և 6-րդ), իսկ այժմ ընթերցողի դատին եմ ներկայացնում մնացած չորսը (2-րդ, 3-րդ, 4-րդ և 7-րդ)՝ հուսալով, որ հետագայում հնարավոր կլինի դրանք լույս ընծայել առանձին գրքով: Իսկ դա անչափ կարևոր է ինչպես ընդհանրապես հայ վաճառականության գործունեության, այնպես էլ անձամբ Ստեփանոս Դաշտեցու նման բարդ ու հակասական գործչի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար: Ի հաստատումն ասվածի՝ բերեմ միայն մեկ օրինակ. Ստեփանոս Դաշտեցու չափածո ստեղծագործությունների վերլուծությանը նվիրված ինձ հայտնի առայժմ միակ գրքի[3] հեղինակ, լիբանանահայ ճանաչված մտավորական Սիմոն Սիմոնյանը, տաղերում չտեսնելով հեղինակի տագնապալից ու անհանգիստ կյանքի գեղարվեստական ցոլացումը, դժգոհությամբ գրել է. «Ո՞ւր է այն Դաշտեցին, որ չափեց անծայրածիր հեռուները Հնդկաստանի «Սուրաթ» քաղաքէն մինչեւ Եւրոպայի «Լիվոռնու» քաղաքը. ո՞ւր է այն տարագնաց ու անհողին

---

[1] Տե՛ս **Հ. Ղ. Միրզոյան**, Ստեփանոս Դաշտեցու «զրույց - բանավեճերի» պատմամշակութային արժեքը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1995, թիվ 3, **նույնի**՝ Ստեփանոս Դաշտեցու առաջին «զրույց - բանավեճը», «Բանբեր Երևանի համալսարանի», 1997, թիվ 3:

[2] Օգտվելով պատեհ առիթից՝ խորին շնորհակալությունս եմ հայտնում այդ տարիներին Երուսաղեմի սրբոց Յակոբեանց միաբանության լուսարարապետ Դավիթ արք. Սահակյանին նման հնարավորություն ընձեռելու համար:

[3] Տե՛ս **Սիմոն Սիմոնեան**, Նորայայտ տաղասաց մը՝ Ստեփանոս Դաշտեցի, Պեյրութ, 1981:

գաղթականը, որ իր հոգիին հատուածները ձգեց յամրընթաց նաւերու մէջ եւ զնգուն կարաւաններու հետ: Ո՞ւր է այն հոգին, որ մօտեցող մահուան սարսուռը ապրեցաւ յարատատան նաւի մը խարխուլ տախտակներուն վերայ, իր հոգին թրջեց ալիքներու փոշիով, եւ որ օրօրուեցաւ կարաւաններու երազահմայ գնացքէն: Մենք ի զուր կը փնտռենք փոթորիկով եւ ասիական տափաստաններու անծայրածիր լռութեամբը վարարած յուզումը, որ տաղաչափութեան դատարկ պարունակները լեցնէր արիւնով ու ջերմացնէր սարսուռով: Իր տաղաչափութիւնները բնակուած պիտի ըլլային գաղթականի յոյզերով, անաւարտ երազներով եւ այլանուն քաղաքներու գոյներովն ու մշուշովը, որոնցմով լիացուցած էր ան իր ճանապարհորդի աչքերը: Բայց հազարաւոր քաղաքներ այցելող եւ բազմազան աշխարհներու անեզր տարածութիւնները չափող այս մարդը սահմանափակ միջոցով մը, գրեթէ անմիջոց կը ներկայանայ մեզի և քիչ անգամ կը բերէ բարբառը այդ վայրերուն: Բազմարկած այս մարդը այդ շքեղ արձագանգէն հազիւ լսելի ձայներ նետած է իր տաղերուն մէջ»[4]: Ասես կանխազգալով ապագայում արտահայտվելիք նման դժգոհությունները՝ Դաշտեցին հենց առաջին «զրույց - բանավեճում» հայտնում է, որ ընկնելով հարստության ետևից, «բազումք ի մարդկանէ կորեան սակս ցանկութեանց արծաթից և գանձուց, ընչից և ստացուածոց ի ծովս և ի ցամաքս լինելով հանապազ մեծի վշտաց և տրտմութեանց՝ բազմիցս ի յերկուղէ ըմբռնեալք, ի տարակուսանաց տատանեալք, ի յահէ գողաց սարսեցեալք և ի յաւազակաց խոցեցեալք, ի տանց և ի ընտանեաց մերկացեալք, բազումք դնելով զանձինս, զկեանս և զհասակս իւրեանց ի վերայ ցանկութեան մամոնային: Երբեմն ի ծովս և ի յալէկոծութեանցն բռնութենէ յատակս ծովու և կերակուր ձկանց ստորադրեալք, երբեմն ի տօթոյ և ի խորշակէ պակասեալք և երբեմն ի սառնամանեացն շնչմանց քարացեալք: Եւ այսոքիկ և առաւել քան զսոսա՝ ցաւք, ոչ այլ ինչ աղագաւ է տեսանել, քան թէ ժողովելն զգանձս և կամ զցանկութենէ արծաթոյն, սակս այլոց մարմնականաց ցանկութեանց…»[5]:

Հարկ կա՞ ասելու, որ գրելով այլոց մասին, Դաշտեցին առաջին հերթին նկարագրել է իր իսկ ապրած կյանքն ու ունեցած զգացումները:

Ավելին, Դաշտեցու «զրույց - բանավեճերում» անչափ հետաքրքրական տեղեկություններ կան նաև հայ – պարսկական մշակութային կապերի ու հարաբերությունների մասին, որոնք այսօր՝ մշակույթների երկխոսության ժամանակաշրջանում, կարևոր են ոչ միայն պատմական անցյալը, այլև ներկան հասկանալու համար:

Բնագիրը հրատարակության պատրաստելիս աշխատել եմ խուսափել անհարկի միջամտություններից. ըստ կարելվույն շտկել եմ կետադրությունը, բացել կարճագրությունները, սեպաձև փակագծերի մեջ վերականգնել պակասող տառերը (մեկ դեպքում՝ նաև բառը), Աստված բառը դարձրել մեծատառ: Ակնհայտ վրիպակները շտկելու դեպքում տողատակում նշել եմ բնագրի տարբերակը, իսկ ուղղագրական սխալները (օրինակ՝ երեսներրորդ, մարդիքք նն) կամ բառային զուգաձևությունները (օրինակ՝ հոգւոյ և հոգոյ) թողել եմ անփոփոխ: Բնագրի վերջում կցված է պարսկերեն բառերի ու բառակապակցությունների ցանկ, որը հայերեն է թարգմանել ԻԻՀ քաղաքացի տիկին Անահիտ Յահամասիհին, որին հայտնում եմ խորին շնորհակալություն:

Հ. Ղ. ՄԻՐԶՈՅԱՆ

---

[4] Նույն տեղում, էջ 31-32:

[5] **Ստեփանոս Դաշտեցի,** Առարկութիւնք ի պարսից ոմանց եւ պատասխանատրութիւնք ի մէնջ…, «Բանբեր Երևանի համալսարանի», 1997, թիվ 3, էջ 94:

Վերստին հարցմունք ի պարսից և պատասխանատրութիւնք ի նուաստութենէ մերմէ, որ սակս թլփատութեան: Զորս պատահեցաւ առարկիլ առ մեզ, զորոց հաւաքեալ ի մի եղաք աստ:

Եղև և բազմից անգամ և սակս թլփատութեանն հարցումն ինչ զմէջն՝ ասելով, թէ տեսանի հանդէպ աչաց թէ բոլոր մարգարէք և նահապետք ունէին զթլփատութիւնն և այս սկսեալ ի հօրէն հաւատոյ Աբրահամու և զկնի նորա Իսահակ, Յակոբ, Մովսէս, Դաւիթ, Սաղոմօն, մանաւանդ և Քրիստոս իսկ: Այլ արդ չգիտեմք արդեօք թէ որո՞յ մարգարէի էք դուք հնազանդք և կամ զիարդ և զինչ պատճառի ոչ առնունք զթլփատութիւնն, ուրեմն և այլն:

Իսկ մեք միշտ զպատասխանի առնէաք և տակաւին առնեմք, թէ թէպէտ թլփատութիւնն որպէս և ասէքն արդարև Աստուած հրամայեաց Աբրահամու, սակայն հարցանելի է, թէ Աբրահամն ի ձեռն թլփատութեանն կոչեցաւ հայր հաւատոյ, թէ՞ ի յանթլփատութեանն և կամ թլփատութիւնն ետ նմա շնորհս արդարութեան, թէ՞ միայն ի ձեռս հաւատոյ, յորժամ է՛րն ի յանթլփատութեան: Եւ կամ յորժամ ասաց Աստուած Աբրահամու, թէ ել դու յերկրէ քումմէ և յազգէ քումմէ և ի տանէ հօր քոյ և եկ յերկիր, զոր ցուցից քեզ և արարից զքեզ ազգ մեծ և օրհնեցից զքեզ և եղիցիս օրհնեալ: Եւ կամ յորժամ կանգնեաց Աբրահամ զսեղան տեառն ի Բեթէլ և կոչեաց զանուն տեառն: Նա՛ ևս յորժամ երևեցաւ նմա Տէր ի տեսլեան և ասաց ցնա՝ մի երկնչէր Աբրահամ, ե՛ս վերակացու եղէց քեզ և վարձք քոյ բազում եղիցին յոյժ: Եւ այլ զմեծամեծս զորս արար Տէր ընդ Աբրահամու մինչև ցիննսուն և ինն ամք կենաց նորին, որպէս և պատմէ Աստուածաշունչ գիրն Մովսէսի մարգարէին, ի յանթլփատութեա՞ն էր Աբրահամ, թէ ի թլփատութեանն: Տեսանի, թէ յանթլփատութեանն: Վասն զի մինչ ցիննսուն և ինն ամք կենացն Աբրահամու էր ինքն Աբրահամ անթլփատ, ուրեմն մինչդեռ անթլփատն էր ի ձեռն հաւատոյ ընկալաւ յԱստուծոյ զարդարութիւնն, զբարեպաշտութիւնն և զհաւատս անբիծս և այլն: Արդ հարցանելի է ևս, թէ Աբրահամն թարց թլփատութեանն հաւատացեալ կոչեցաւ և յառաջ քան զթլփատիլն եղև երկիւղած Աստուծոյ և հայր հաւատոյ, թէ թլփատութեամբն: Եւ կամ թէ քան զիննսուն և ինն ամ և նախքան զթլփատիլն իցէր զվաղճան առեալ ի կենցաղոյս և թարց թլփատելոյ զմարմինն իւր արդեօք կարէր կոչիլ հայր հաւատոյ և բարեկամ Աստուծոյ, կարէր ուրեմն մտանել ի փառս հանդերձելոյ կենացն, թէ սակայն թլփատութեան իւրոյ տակաւին մնայր յանհաւատութեան և այնքան խոստումն Աստուծոյ մնայր պարապ և ունայն և կոչէիք զնա՛ անհաւատ և արժանի դժոխոց, որպէս և այժմիկ կարծիք ձեր են սակս անթլփատից: Յասացելոցս հետևի ուրեմն, թէ յորժամ ետես Աստուած զմեծահաւատութիւն և իսկապէս զծան[աւթ]ութիւն, որ առ ինքն, սիրեաց զնա սակս անխարդախ հաւատոյն նորին միայն, ուստի և արար զմեծամեծս խոստանալով բազմացուցանելով զծնունդ սորին քան զաստեղս երկնից և ի ծնընդոց նորին յարուցանել զթագաւորս մեծամեծս և անուանիս և տաց քեզ, ասաց և զաւակի քում երկիրս այս և զամենայն երկիրս քանանացոց ի ժառանգութիւն յաւիտենական: Եւ այս ինչ լիցի նշան ուխտի իմոյ, զոր ուխտեցի քեզ, զի թլփատեսցի ձեր ամենայն արու, զի եղիցի նշանակ ուխտին ընդ իս և ընդ ձեզ: Ուրեմն հրաման թլփատութեանն ոչ այլ ինչ աղագաւ հրամանեալ եղև յԱստուծոյ, եթէ ոչ սակս նշանի մեծահաւատութեանն Աբրահամու և վասն խոստման և դաշինն Աստուծոյ առ ի վերայիշողութիւն

ազգաց յազգս: Ն՛ա ևս գոլ նշան իմն ի մէջ ծնընդոցն անհաւատութեանց: Եւ ոչ թէ թլփատութիւնն իցէ բան ինչ հաւատոյ և կամ մաքրութիւն իմն, որով կարիցէ հասուցանել զմարդն ի տեսութիւն Աստուծոյ և կամ ի յերանութիւնն: Զինչ արդեօք համարի գոլ ի ձէնջ թլփատութեանն և կամ զինչ զօրութիւն ներգործութեանն իւրոյ: Միթէ հատանումն ծայրի անդամոյ միոյ կացուցանի մարդն ընդ աջմէ Աստուծոյ և կամ արդարացուցանել կարէ զնա՛ և կամ տալ կարօղ է մաքրութեան մտաց հոգւոյ, ուստի կարիցէ մարդն շահել նոքօք զերանութիւնն: Ո՞չ ապաքէն բազմիցս հատանեն զականջս կամ զագիս անսուրբ կենդանեացն, որպէս և տեսանին միշտ, ուրեմն է՞ր աղագաւ ոչ սրբին նոքա ամենեքիմբ: Երևի ուրեմն, թէ հատումն և կամ թլփատումն անդամոցն ո՛չ է սակս արդարանալւոյ կամ սրբութեան աղագաւ հրամայեաց Աստուած Աբրահամու և ծնընդոց նորա, այլ սակս նշանակութեանն հաւատոյն, զի նշանաւն այնուիկ ճանաչիցին որդիք հաւատոցն ի յորդոցն անհաւատութեանն, որք էին հեթանոսք և կռապաշտքն, որպէս և ի վեր անդր ասացաք: Եւ թէ վասն էր այս դուզնաքեայ նշանս հրամայեաց Աստուած Աբրահամու և ոչ զկատարելն և զբանիւ բերանոյ զվկայութիւն և զխոստովանութիւնն, որ է ամենեքիմբ կատարելագոյն մանաւանդ թէ բղխեալ ի հաւանութենէ սրտին նաև յօժարութենէ հոգւոյն: Նախ զի փոքրագոյնք և աղօտագոյնք էին որդիք հաւատոցն, այսինքն Աբրահամն և Իսմայիլն և կամ թէ ընդոծինք Աբրահամու, վասն զի չև ևս էր ծնեալ զԻսահակն, վասն որոյ և ոչ կարծէին բաւական լինիլ ի մէջ այնքան բազմաց ազանց կռապաշտիցն յայտնել և կամ ընդ արձակ հռչակել զաստուածապաշտութիւնն իւրեանց բանիւ, մանաւանդ, թէ պանդուխտք էին ի միջի նոցայ և վրանաշուրջք, սակս որոյ զնշան հաւատոյն, որ է բերանով բացայայտութիւնն, ոչ կամեցաւ Աստուած հրատարակել մինչև զբազմանալն ծնընդոց նորա և ցհասանիլ աւետարանի որդւոյ նորա տեառն մերոյ Քրիստոսի, որ ի ցեղէն Յուդայ ըստ խոստմանն իւրոյ, թէ ի նմանէ օրհնեսցին ամենայն ազգ երկրի, այսինքն ի յԻսահակայ: Այլ կամեցաւ տալ զանկատար զնշան ծածկաբար ի յանքոյթ և ի ծածուկ տեղիս, մինչ զի ոչ ոք ի հեթանոսացն իսկապէս ճանաչել կարասցէ զդիտաւորութենէ հաւատոյ, որոյ ի յԱստուած կենդանին առ ի բռնադատել և ի կռապաշտութիւն հրաւիրել զնոսա, որք էին սակաւ անձինք և տկարք ի մէջ բազմամբոխ կռապաշտիցն: Իսկ զկնի բազմանալոյ հաւատացելոց և ասուածապաշտիցն և գալստեան փրկիչն մերոյ Մեսիային, հրամայեաց հաւատացելոցն իւրոց բանիւ բերանոյ իւրոյ գալ, հռչակել զհաւատն և զկերպ ներտրամադրեալ դիտաւորութեան սրտին յայտնի և համարձակ, թարց երկիւղէ ումեք և կասկածանաց, որպէս և տեսանի, թէ որքան քրիստոսադաւանք և հաւատացեալք Քրիստոսի ի գալստենէն Քրիստոսի մինչև ցայս վայր կատարեցան մահուամբ և մարտիրոսական սպանմամբ թէ՛ սրով, թէ՛ սովու, թէ՛ ի հրոյ, թէ՛ ի գազանաց և ի չարչարիլ և ի սպանանիլն ոչ երբէք ետուն ծածկել զդաւանութիւն հաւատոյն ամենեքիմբ, այլ յայտնի և համարձակ խոստովանեցան զհաւատս Քրիստոսի բանիւ բերանոյ իւրեանց: Թէպէտ և ոչ իբրև զպարսիկքդ, որք պարծիք ի թլփատութիւնն, որ ի սնոտի երկիւղէ իմիք ի քթթել յական փոփոխէք զհաւատս բանիւ բերանոյ ձերոյ և ու՛ր հասանիցիքն ձևանաք կերպարանօք և կրօնիւքն տեղւոյն այնորիկ: Որպէս և բազմիցս տեսաք աչօվք մերովք թէ՛ ի տանն յունաց, թէ՛ ի Ֆռանկստանին, մանաւանդ և ի բոլոր տանն հնդկաց:

Յասացելոցս հետևի, թէ զկնի գալստեան Մեսիային և ի մեծէ յահարկու հրամանէ յաղթող զօրագլխոյն մերոյ Քրիստոսի զհամարձակութիւն և զվըստահութիւն էառ մարդն առ ի ընդոտնել զերկիւղն սնոտի և արիանալ ի ձեռն հաւատոյն, որ յԱստուած և գանձել ի հանդերձեալ կեանն ոչ երկնչել յումեքէ և ոչ իւիք, սակս որոյ յայնժամն զնշան հաւատոյն, որ էր թլփատութիւն անդամոց մարմնոյն ի բաց մերկանալով եղև բանն և դաւանութիւնն եղեալ ի դաւանութենէ սրտին և ի բանից բերանոյ իւրաքանչիւրոցն: Վասն զի բանիւ բերանոյն արդարանայ մարդն և բանիւ բերանոյն դատապարտի: Վասն զի յառաջնովն լինի աստուածապաշտ և երկրորդովն լինի ուրացող, վասն որոյ և փրկիչն մեր Քրիստոս հրամայէ ասելով, թէ ի բանից քոց արդարացիս և ի բանից քոց դատապարտեսցիս: Եւ դարձեալ ասէ և որ խոստովանեսցի զիս առաջի մարդկան, խոստովանեցայց և ես զնմանէ առաջի հօր իմոյ և որ ուրացէ զիս առաջի մարդկան, ուրացայց և ես զնմանէ առաջի հօր իմոյ, որ երկինս է, և այլն: Ուրեմն այսո՛ւ թլփատութեամբ նշանաւս կարէ շահել մարդն զերանութիւն և առանց սորայ կորուսանէ զհոգևոր կեանն իւր: Եւ ոչ թէ թլփատութեամբ անդամոյն, որք են արարողութիւնք դատարկք և թարց օգտի և շահաւետութեան, վասն զի ոչ ի թլփատիլն յաւելնի ինչ ի հաւատս և ոչ [չ]թլփատիլն պակասի ի հաւատոցն, ուրեմն և այլն: Նա ևս կամիմ և զայս ինչ հարցանել ի ձէնջ ունողաց և ընդունողացդ թլփատութիւն, թէ հաւատն օրինադրին ձերոյ, այսինքն՝ մուսուլմանութիւնն զկատարումն իւր առնու ի թլփատութենէն, թէ ի դաւանութենէն, այսինքն՝ ի քեալամայ ասելոյն ձերմէ: Եւ թէ ասէք ի թլփատութենէն և հետևապէս, եթէ ոք անծանօթէ մեռեալ իցէ յանկեան ուրէք ոչ կարեմք, ասէք, ենթադատել զնա՛ գոլ մահմետական եթէ ոչ նկատեալ տեսանիցեմք ի նմա՛ զնշան թլփատութեանն ի մարմնի նորա, թէպէտ եթէ կին ոմն մեռեալ իցէ անծանօթ, ուրեմն ոչ կարէք ճանաչել զնա, թէ է մուսուլման թէ ոչ, ուրեմն և այլն: Պատասխանելի է, ուրեմն յայնժամն, թէ ապա կանայք ձեր ոչ են կատարեալ հաւատովն Մահմետի, վասն զի ոչ ունին զթլփատութիւնն, իսկ եթէ ասէք են կատարեալք իբր զարս, և զերիտասարդունս, և զտղայս, ուրեմն թլփատութիւնն ոչ է օգտակար հաւատոյ կամ օրինացն ձերոց և կամ հաւատոց և օրինաց ազի ուրուք, որով կարասցին ի ձեռն թլփատութեանն շահել զարդարութիւն և կամ զտեսութիւնն Աստուծոյ: Եւ առ ի հաւատարմութիւն դիտաւորութեանն մերոյ և ճշմարտութեանց օրինաց աւետարանին Քրիստոսի ասելի, թէ յոյժ հարկաւորագոյն և պատշաճագոյն է վասն հռչակման աստուածապաշտութեան զնշան դաւանութեան և զխոստովանութիւն բերանոյ, այսինքն՝ ըղրարն, որ համանգամայն պարունակէ զարս և զկանայս և պարաւանդէ զամենեսեան, քան թէ զթլփատութիւն առնիցէ անդամոցն, որ միայն պարաւանդէ զարս և զտղայս հարկաւորապէս և առանց կարծեաց: Եւ առ ի հաստատութիւն ունայնութեան և դատարկութեան թլփատութեանն ձերոյ հարցանելի է նախահայրն ամենեցուն՝ Ադամ, Աբէլ, Սեթ, Ենովք, Նոյ և երեքեան որդիք Նոյի, զորս Սէֆի հօլլահ, Նապի հօլլայ և զփէյղամբարանս անուանէք, սոքայ թլփատեա՛լք էին, թէ անթլփատք գոլով, կարացին շահել ի ձեռն անթլփատութեանցն իւրեանց զսէֆիօլլահութիւնն և զնապիօլլահութիւնն, որպէս և ասէքն և հետևապէս կարացին ի ձեռն սոսկ հաւատոյն շահել զարդարութիւն և կոչիլ պաշտօնեայք և հաւատացեալք Աստուծոյ, զիարդ մեկ կամ ամենայն ազգ երկրի ոչ կարասցուք շահել ի ձեռն հաւատոյ աստուածապաշտութեանն զարդարու-

թիւնն դաւանութեամբ բերանոյ յիշելոցն ի ներտրամադրեալ զօրութենէ մտաց և հաւանութեանց հոգւոյն: Ուրեմն, յայտ է, թէ թլփատութիւնն ոչինչ է և ոչ ունի զզօրութիւնն ինչ, որով կարասցէ զմարդն նովիմբ շահել զշնորհ իմն կամ արդարութիւն, ուրեմն և այլն:

Պատասխանեցին և բազմից պատասխանեն՝ ասելով, թէ եթէ թլփատութիւնն ոչինչ էր, որպէս և ասեն, ուրեմն Քրիստոսն է՞ր արդեօք էառ զթլփատութիւնն, ուրեմն և այլն: Ասելի է առ այս, թէ մինչչև ևս էր փրկչին մերոյ ժամանեալ ի կատարեալ հասակ երիտասարդութեանն, տակաւին ներգործէր հին օրենքն, այսինքն՝ Մովսէսի ի յայսպիսի արարողութիւնս, որք հայէին միայն ի յզգալի մարմինս և յիրս մարմնականս, այսինքն՝ թէ զթլփատութիւնն և զլուացմունս մարմնոց և անդամոց, թէ զզենմունս անասնոց սրբոց և զխորշմունս ի յանսրբոց կենդանեաց և նմանք սոցին: Վասն որոյ և պարտ իսկ էր Քրիստոսի հնազանդիլ օրինացն Մովսէսի, մանաւանդ մինչ էրն աւուրց եօթնից յորում ընկալաւ զթլփատութիւնն, իսկ իբրև եհաս ի երեսներրորդ ամն և մկրտեցաւ ի ձեռն Յոհաննու Մկրտչին և ձեռնադրեցաւ ձայնիւ հօրն Աստուծոյ ի բարձանց, յայնժամն բարձան զօրութիւնք, ի վեր անդր ասացեալ օրինադրութեանցն: Եւ սկսաւ աճիլ ճշմարտութեամբ օրինադրութիւնք աւետարանին Քրիստոսի: Վասն զի ամենայն մարգարէք մինչև ցկատարեալ հասակն իւրեանց հնազանդէին հայրենի օրինացն մինչև ցնուիրումն մարգարէութեանն, վասնզի և դուք ևս ասէք, թէ փէյղամբարութիւնն ըստացեալ եղև մարգարէն և ռսուլն մեր զկնի քառասուն ամի կենացն իւրոց, հետևապէս և ասէք, թէ մինչև ցնուիրումն մարգարէութեանն հնազանդիւր հայրենի օրինացն, յոմանցդ ասելով օրինօքն Աբրահամու և յոմանցդ ասելով՝ օրինօք Քրիստոսի: Ուրեմն և պարտ իսկ էր և Քրիստոսի հնազանդիլ օրինադրութեանց թլփատութեանց մանաւանդ յորժամն էր մանուկ Է օրեայ, ուրեմն և այլն: Եւ յաւուր միում և ի հակաճառիլն մերում ընդ ումեմն պարսկի դրացւոյ մերոյ ի Հնդիկս և սակս իրողութեանս, այսինքն՝ թլփատութեան և ի յաւարտ բանից երկոցունց կողմանցս ասացի յայնժամն առ այրն իբրև զայրացուցանելոյ զնա՛ դո՛յն ինչ և թերևս ծաղու աղագաւ և ծիծաղականաւ դիմաւ, թէ զարմանամ, թէ զիարդ ոչ երկնչիք դուք յԱստուծոյ և կամ տակաւ ոչ [զ]գաստանաք ի թմրութենէ մտաց և ի յունայն վաստակոց ձերոց՝ մարտնչելով ընդդէմ կամաց և սահմանադրութեանցն Աստուծոյ: Վասն զի տեսանի, թէ մինչ դուք տաք թլփատել զմարմինս ձեր, տակաւ և որդիք ձեր ծնանին ի ձէնջ իբրև զմերս անթլփատս և մինչ թլփատէք զորդիս ձեր նմանապէս և ծնանին որդիք որդւոց ձերոց անթլփատս: Եւ այսպես տգէտ արարողութեանն ձերով կամիք տալ արգելուլ թերևս զսահմանադրութիւնն Աստուծոյ և ընդդիմանալ կամաց նորա ըստ խստասրտութեանն եբրայեցւոց, վասն զի, եթէ կամէր Աստուած նշան յաւիտենական տալ զթլփատութիւնն, պարտ իսկ էր, զի որդիք թլփատելոցն ծնանիցէին և թլփատեալք: Զարմանք է, թէ զիարդ ոչ երկնչիք դուք յԱստուծոյ և ի դատաստանաց նորա, որ միշտ ընդդիմանայք առ այսպիսի ակներև հաւաստութեան բանիցս: Յայնժամ պատասխանեալ ասաց մեծաւ զայրացմամբ, թէ գնայ անօրէն, գնայ արդարև մեղք է մեզ և վտանգ հոգւոյ խօսիլ ընդ ձեզ ի վերայ բանից հաւատոյ: Վասն զի և հազրաթի ռսուլն մեր ևս է արգելեալ այսպիսեաց հակաճառութեանց՝ հրամայելով, թէ իբրև հարցանիցիք ի յայլադաւանից սակս հաւատոց, ասասջիք ալէյքում, դինաքում, այսինքն՝ իմն ինձ և քոնն քեզ: Եւ աւարտ էառ զրուցատրութիւնն մեր և այսքան առ այս:

Եւ դարձեալ հարցումն ի յայլ ազգեաց, որ [յ]աղագս օրինաց և պաշտամանցն մերոց և ի մէնջ զպատասխանատ[ր]ութիւնք: Եւ այսք ո՛չ թէ զոմանս ի նոցանէ ձգելոյ առ մեզ աղագաւ, այլ հաստատելոյ զմերայինս, ունելով զնկատումն:

Զբազումս առարկութիւնս յառաջ արկանեն մեզ մանաւանդ ի յունայնաբանելն իւրեանց, յորժամ կամին զՆոյի, զԱբրահամու, Մօսէսի, Դաւթի և Սաղոմօնի, այսինքն՝ յիւրաքանչիւրոցդ զիմն յատուկ պատգամաւ զօրէնս, զկրօնս և զպաշտամունս ընձեռել իբր ասել, թէ յԱդամայ մինչև զՆոյ այլ իմն պատգամաւ հաճիւր Աստուած պաշտիլ ի մարդկանէ: Եւ ի Նոյէ մինչև զԱբրահամ՝ այլ իմն պատգամաւ: Եւ այսպէս հասուցանել կամին մինչև զՔրիստոս: Ուստի կարասցեն ասել, թէ որպէս ի գալ Նոյի ոչընչացաւ պատգամ և օրինադրութիւնն Ադամայ, հետևապէս և ի գալ Աբրահամու զՆոյինն, այսպէս և զայլոցն: Ուրեմն և սոյնպէս ի գալ օրինադրին մերոյ պարտ էր և ոչընչանալ, նա՛ և դատարկանալ աւետարանին օրինադրութեանցն Քրիստոսի և այլն:

Պատասխանեմք և ասեմք, թէ ի գիրս կտակարանաց, զորս ունին ազգ եբրայեցոց, ունիմք և մեք զբովանդակն և մանաւանդ ամենայն ազգի քրիստոնէից: Սակայն ոչ ընթեռնանի ուրեք երբէք Ադամայ, Նոյի կամ Աբրահամու զօրէնս իմն տուեալ հանդերձ պատգամաւ և կամ Դաւթի կամ Սաղոմօնի որպէս և կարծէքդ: Այլ միայն Մօսէսի ետ Աստուած զօրէնս հանդերձ* պատգամաւ և ոչ իւրաքանչիւր նախահարցն, որպէս և ասէքդ, վասն զի թէպէտ Ադամն, Նոյրն և Աբրահամն կամ Եսայիաս, Երեմիաս և այլ մարգարէքն, սուրբ հարք և պատրիարգունքն ասին սակս ծանօթութեանն միոյ միայնոյ ստեղծողին և զդէմ տարփանաց և ակնկալութենէ գալստեան Մեսիային, այսինքն՝ օծելոյն և այս՝ ի ձեռն լուսաւորութեան աստուածային ազդեցողութեանն, սակայն ոչ էին պատգամաւ և օրինօք փէյղամբարք իբրև զՄօսէս: Թէպէտ և Դաւիթ, Սաղոմօն և այլ մարգարէքն շնորհօք հոգոյն Աստուծոյ երգեցին զբազում երգս՝ թէ զաբուրն և թէ զայլս իմաստնալից բանս, սակայն ոչ առին Աստուծոյ այլ իմն օրէն կամ պատգամ, այլ վարէին օրինօք և պատգամաւն Մօսէսի. որպէս և ահա ակներև տեսանին ազգ Դաւթի և Սաղոմօնի հնազանդեալք օրինացն Մօսէսի մինչև ցայսօր: Նա՛ ևս ի գալստեան մերոյս Մեսիային թէպէտ կարցէք բոլորովին ոչնչանալ և դատարկանալ օրինացն Մօսէսի, սակայն ոչ է ուղիղ կարծիքն ձեր. նախ՝ զի տակաւին մնայ տասն բանեայ օրէնքն մինչև ցայսօր և մինչև ցկատարած աշխարհի: Վասն զի է օրէնք մշտնջենականք հրամայեալք յաստուածայնուստ և յոյժ բարւոք հարկաւորք ի կառաւարումն բոլոր աշխարհի: Իսկ ոչնչացան միայն արարողութիւնք ոմանք, զորս հայէին ի մարմնաւոր իրողութիւնս, որպիսիք էին զենմունք անբան անասնոց և խորշմունք կերակրոց ոմանց: Նա՛ և լուացմունք մարմնոց, փոքրելոց զհերս և կամ հատանելոյ զմաշկիկ առնացի անդամոցն, այսինքն՝ զթլփատութիւնն, որ ոչ է աւելորդ և հարկաւոր և սոյնպիսիք չնչին արարողութիւնք: Վասն զի և տէրն մեր Քրիստոս ևս հրամայէ ի սուրբ աւետարանուօջն ի Մատթէոսի հինգերրորդ գլուխն և ի 17 համարն, թէ ես ոչ եկի լուծանել զօրէնս, այլ լնուլ: Վասն զի ոչ ոք կարէ փոփոխել զբանն հարկաւոր, որ ելանիցէ մանաւանդ ի բերանոյ Աստուծոյ՝ թէ զբանն,

* Բնագրում հերդերձ է:

զոր խօսեցաւ ի ձեռն Մօսէսի, թէ Դաւթի կամ թէ Սաղոմօնի կամ թէ և այլոց մարգարէիցն: Վասն զի օրինադիրն ոչ էր Մօսէսն, զի ի մեռանիլն Մօսէսի մեռանիցիւր և օրինադրութիւն նորին, ո՛չ Նոյ ի մեռանիլ, ո՛չ Աբրահամ և ոչ իւրաքանչիւրքն*: Ուրեմն իւրաքանչիւրոցն մնացին կենդանիք զհրաման և զօրէնս մնացականս, զորս հարկաւորապէս հային առ հոգևոր կեցութիւն մարդոյն: Յասացելոցս հետևի ուրեմն, թէ ի մեռանիլ իւրաքանչիւրոցն մնացին կենդանի հրաման և պատգամք այնոքիկ, որք օգտակարք էին ի կեցութիւն հոգոց մարդկան: Որպէս և տեսանի ի բոլոր ազգն եբրայեցոց, մանաւանդ և ի ընդհանուր եկեղեցիս քրիստոնէից զբովանդակ պատգամս և զգրեանս մարգարէականս միշտ ընթեռանիլ անպակաս յամենայնում աւուր: Ուրեմն այդու դուզնաքեայ ձեռնարկութեամբդ ոչ էր պարտ մեռանիլ և դատարկանալ աւետարանին Քրիստոսի, ուրեմն և այլն: Եւ երկրորդ, եթէ դուք զզենմունս անասնոց և զտարբերութիւն կերակրոց սրբոց և անսրբոց և կամ զլուացմունս բաղանեաց, զղուրբանն և զթլփատութիւնն մարմնոց և այլ սոյնպիսի արարողութիւնս, որք հային առ ապականացու մարմինն, որք են պղծութեամբ լիք, զօրէնս մշտնջենականս և պիտանացուս համարիք, ուստի և ի գործ ածէք միշտ: Ուրեմն հարցանելի է, թէ այդոքիկ օրէնք Աբրահամու, Մօսէսի ետ Աստուած, թէ՞ օրինադրին ձերոյ: Վասն զի յառաջ քան զԱբել ոչ ոք մատոյց պատարագ ի յանասնոց և յառաջ քան զԱբրահամ ո՛չ ոք թլփատեաց զոմանս: Եւ յառաջ զՄօսէս ոչ ոք հրամայեաց վասն կերակրոց և կենդանեաց, թէ այսոքիկ են, այնոքիկ անսուրբք և պիղծք: Եւ հետևապէս ոչ ոք հրամայեաց յառաջ քան զՄօսէս զլուացմունս մարմնոց և զպղծութենէ դաշտանի կանանց, զզենմունս և զորոնմունս անասնոց, թռնոց և լողակաց: Ուրեմն այսոքիկ օրէնք յառաջ քան զգալուստ օրինադրին ձերոյ ետ Աստուած Աբելի, Աբրահամու, Մօսէսի, որ է յայտ և յանդիման աչաց և ոչ մարգարէին ձերոյ: Իսկ արդ, եթէ զայսոսիկ և կամ զայսպիսի արարողութիւնք օրէնս իմն համարէք և կամ հետևապէս ի մեռանիլ միոյն ոչընչանալ և օրինադրութեանց նորին հռչակէք, ուրեմն մեռանիլն Աբելի մեռանիլ պարտ էր և օրինադրութիւն նորին, որ է ղուրբանն ի անասնոց, ուրեմն զիարդ մատուցանէ Նոյ, Աբրահամ, Մօսէս, Դաւիթ և բոլոր տունն Իսրայէլի և կամ մանաւանդ, թէ դուք զօրինադրութիւնս մեռելոյն Աբէլի մինչև ցայսօր, այսինքն՝ զղուրբանն:

Նմանապէս և ասելի է և զթլփատութենէն, զոր Աստուած ի ձեռն Աբրահամու հռչակեաց, ուրեմն ի մեռանիլն Աբրահամու ոչ էր պարտ Մօսէսի, Դաւթի, Սաղոմօնի և կամ բոլոր եբրայեցոցն, մանաւանդ և տալ զթլփատութիւնն, որ մեռաւն ընդ Աբրահամու: Հետևապէս և զխորշիլն ի կերակրոց ոմանց և ի այլազգաց և զլուացմունս մարմնոց և նմանք սոցին Մօսէս հրամայեաց և ոչ այլ ոք: Ուրեմն և ի մեռանիլն Մօսէսի դատարկանալ պարտ էր և մեռանիլ սահմանադրութեան նորին: Է՞ր արդեօք ուրեմն Դաւիթ, Սաղոմօն, Ռոբովամ և բոլոր եբրայրեցիքն պաշտէին և պաշտեն մինչև ցայսօր զօրինադրութիւնս մեռելոյն Մօսէսի, մանաւանդ թէ դուք ևս, որք յուսաք թերևս նոքօք մտանել ի փառս: Ուրեմն կամ ի մեռանիլ միոյ օրինադրին ո՛չ ոք կերպիւ կարաց ոչընչանալ և դատարկանալ օրինադրութեանց նորի[ն], որպէս և առաջի աչաց եդաք: Վասն զի և ահա՛ տեսանին, զի կենդանիք են ի միջի ձերում մինչև ցայսօր և թերևս մինչև ցժամանակս: Եւ կամ թէ ասիլ պարտիք,

---

* **Նոյ... իւրաքանչիւրքն** հատվածը պակասավոր է:

թէ սոքայ ոչ են օրէնք, նա՛ և ոչ ունին զզօրութիւն իմն, որով կարասցեն օգնել ընդունակացն իւրեանց և են օրինադրութիւնք մարգարէից մեռելոց: Վասն զի ի մեռանիլ պատճառին, որք են մարգարէքն, մեռան և պատճառելիքն, որք են օրինադրութիւնք նոցին: Այլ արդ, եթէ զառաջինն ասէք, ուրեմն ի գալ մարգարէին ձերոյ ոչ ոք կերպիւ զվաղճան էառ և կամ պարտ եղև դատարկանալ աւետարանին Քրիստոսի մինչ զի հռչակեսցի օրինադրութիւն մարգարէին ձերոյ: Իսկ եթէ երկրորդն ասէք, ուրեմն ղուրբանն մեռաւ ընդ Աբէլի, թլփատութիւնն ընդ Աբրահամու և զբովանդակ օրինադրութիւնն մօսէականս՝ ընդ Մօսիսի: Ուրեմն ընդէր պարծիք ի մեռեալ արարողութիւնս մեռեալ մարգարէիցն և երկոքին ձեռամբք պինդ կալեալ ունիք զպախուց նոցին և ակն ունիք մեծաւ յուսով նոքօք շահել զկեցութիւն հոգոց և նոքօք հասանիլ երանութեանց թերևս, ուրեմն և այլն: Եւ դարձեալ տացուք թերևս ըստ կարծեացն ձերոց մեռան իւրաքանչիւրքն հանդերձ պատգամաւն իւրեանց, այսինքն՝ Նոյրն, Աբրահամն, Ադամն, Աբէլն, Մօսէսն, Դաւիթն և Սաղոմօնն: Եւ այսպէս փոփոխելով եհաս մինչև ցՔրիստոս առ ի հաստատել թերևս, թէ ուրեմն և զկնի գալստեան օրինադիրն մերոյ նմանապես և մեռաւ և աւետարանն Քրիստոսի և լռեաց օրինադրութիւն աւետարանին, ուրեմն և այլն:

Պատասխանեմք առ այս և ասեմք, թէ ուրեմն ըստ ձեզ, եթէ ոչ էր մեռեալ Աբէլեն մինչև ցժամանակս Նոյի, Նոյ ոչ կարէ[ր] փոփոխել օրինադրութիւնս Աբէլի: Հետևապէս եթե ոչ մեռանէ[ր] Նոյ մինչև ցժամանումն Աբրահամու, ոչ կարէր Աբրահամն փոփոխել զօրինադրութիւնս Նոյի: Եւ այսպես գալով հասանիցիւր մինչև ցՄօսէս: Ուրեմն եթէ Մօսէս ոչ էր մեռեալ մինչև ցգալուստն Քրիստոսի, Քրիստոսն ևս ոչ կարէր փոփոխել և զօրինադրութիւնսն Մօսէսի: Իսկ եթէ այսպէս, ուրեմն մինչ Քրիստոսն ոչ մեռանիցի, ոչ կարէ այլ մարգարէ փոփոխել զօրինադրութիւնն Քրիստոսի: Ուրեմն օրինադրութիւն և աւետարանն Քրիստոսի պահէ զզօրութիւն իւր մինչև ցկատարած աշխարհի: Վասն զի Քրիստոսն տակաւին կենդանի է և է յերկինս ըստ վկայութեանն մարգարէին ձերոյ, զոր բազմիցս պատմէ ի պատգամին իւրոյ, թէ Քրիստոսն է կենդանի և է յերկինս, թէպէտ ի չորրորդում երկնում դնելով նմա զտեղի: Մանաւանդ և ըստ աւետեաց հրեշտակապետին, որ առ սուրբ կոյսն, որ ի Ղուկասու առաջին գլխուջ և ի 33 համարն, ուր ասէ, թէ. Եւ տացէ նմա Տէր Աստուած աթոռն Դաւթի հօր նորայ և թագաւորեսցէ ի վերայ տանն Յակոբայ ի յաւիտեան և թագաւորութեան նորա վաղճան մի լիցի: Ուրեմն ըստ վկայութեան գրոց երկոցունցս Քրիստոսն է կենդանի և է յերկինս մարմնով իւրով, վասն որոյ ոչ ոք կարէ փոփոխել զօրինադրութիւնս կենդանոյն Քրիստոսի մինչև ցմիւսանգամ գալուստն նորին, որ գալոցն է ի դատել զկենդանիս և զմեռեալ, մանաւանդ, թէ և վկայութեամբ գրոցն ձերոց, որպէս և ասէքն, թէ գոյ գրեալ ի գիրս պատգամաց մարգարէին մերոյ, թէ մինչև Քրիստոսն աշակերտօքն իւրովք հանդերձ անցանէր զգերեզմանօք մեռելոց, հարցին ցնա՛ աշակերտքն նորա զորպիսութենէ տապանին Նոյի: Առ ժամայն ի ձայնելն Քրիստոսի և յարուցանելն զորդի Նոյին, այսինքն՝ զՍէմ և վաղվաղակի յառնելն Սեմայ ի գերեզմանէն սպիտակացելովք ալեօք, և ի հարցանելն ի Փրկչէն սակս սպիտակութեան ալեացն և պատասխանելն նմա՛, թէ յահէ ձայնի տեառնդ և ի յերկիւղէ քննութեան դատաստանին, առժամայն սպիտակեցան ալիք իմ, վասն զի այնպէս գիտէի, թէ ի դատաստան կոչէ զիս Տէրդ և այլն: Ուրեմն և ըստ վկայութեանց ձերոց Քրիստոսն է կենդանի և է դատաւոր կենդանեաց և մեռելոց: Վասն որոյ և ոչ ոք կարէ փոփո-

խել զօրէնս կենդանոյն Քրիստոսի մինչև ցմիւսանգամ գալուստն նորին, որ է կատարած աշխարհի, ուրեմն և այլն:

Եւ դարձեալ տացուք և դոյն ինչ արծարծել սակս իրողութեանս և ի ձեռն յարացուցի: Վասն զի տեսանի ի յամենայն ազինս գոլ արհեստ և գիտութիւն, ուստի և առ հասարակ մարդիկք կամին ուսանիլ և գիտել: Իսկ ուսանիլն և գիտել[ն] ոչ այլով իւիք կարեն ստանալ, եթէ ի գիտնոց և ի վարժից: Հետևապէս և տեսանի, թէ վարժապետք արուեստից և գիտութեանց նախ տան գիտել դեռակրթիցն զթեթևագոյն մասն բանից առ ի ուսանիլ զդիւրութեամբ և սակաւ առ սակաւ կարասցեն ըմբռնել ի միտս: Որպիսի է տեսանել ի յուսումն տառից և գրոց, զի նախ տան ծանօթանալ զհասարակ տառիցն և ապա զձայնաւորացն և բաղաձայնի տառիցն, ապա զբայից և բանից շարամանութեանց և ապա՛ արտաքնոց գիտութեանցն առ հասարակ և զփիլիսոփայական արհեստացն: Եւ իբրև կատարելապէս ի միտ առնուն զարտաքինսն, ապա տան մատչացուցանել զնոսա առ գերագոյն և գերբնագոյնն, այսինքն՝ առ աստուածաբանութիւնն, որոյ ոչ գոյ այլ իմն կատարելագոյն գիտութիւն: Արդ՝ եթէ հակառակն սմին տացէ առնուլ վարդապէտն զսկիզբն գիտութեան, այսինքն՝ նախ տացէ ուսուցանել դեռակրթիցն զաստուածաբանականն, ապա՛ զարտաքին և ապա՛ զտառս և զայլն, զինչ օգուտ լինէր յայնժամն աշակերտելոցն, ո՛չ ապաքէն եղծանիւր կարգ իմաստասիրութեանն և խանգարիւր իմաստութիւնն. թերևս վարդապետն լինիւր իբր զմի ի գռեհկաց և տգիտաց աշխարհի: Նա՛ ևս տեսանի ի բոլոր կենդանիս, մանաւանդ թէ և ի մարդն, զի ծնօղք զաւակացն նախ տան զծնունդս իւրեանց բուծանել կաթամբ և ի յօր ըստ օրէ աճիլն և զարգանալն տան ապուրս համեմատ հալելեաց և ստամոգացն նոցունց: Իսկ եթէ զհակառակն սորին կամիցին ի գործ ածել, լինին սատակիչք և սպանօղք զաւակացն իւրեանց և ոչ ևս կարին ասիլ մարդոյն այնմիկ բանական և մակացու, մանաւանդ թէ անբան կենդանիքն ևս ոչ իշխեն տան ուտել ծնրնդոց իւրեանց զհակառակն, այսինքն՝ թէ առիւ[ծ]ք, թէ գայլք և այլք գազանք և անասունք, ուրեմն և այլն: Նմանապէս և ծայրագոյն իմաստութիւնն և անհամեմատ վարդապէտն ամենից արարածոց Աստուած իբրև արար զմարդն և կամեցաւ խելամուտ առնել զնա և իմաստնացուցանել: Նախ սկսաւ ուսուցանել նմա՛ զբանական գիտութեանն զորս եդ ի նմա՛ ի յսկզբան լինելութեանն, զի նովիմբ վարժեսցի մինչև ցկատարեալ միտ առումն նոցին: Եւ իբրև սկսաւ մարդն այսու բանական օրինօքս վարժել, ապա՛ կամ ընձեռեաց նմա այլ իմն գիտութիւն և կատարելագոյն քան զառաջինն, այսինքն՝ զգրաւորական օրէնքն ձեռամբ Մօսիսի, այսինքն՝ ընտրելն ի մէջ կենդանեացն, թէ այսինչ կենդանիքն են բնութեամբ մաքուրք, և համեստք, և ուտելիք, և այնինչ կենդանիքն են զազրաբանութիւնք և են գարշելիք և ոչ ուտելիք, տալով և ընտրել վասն Աստուծոյ զօր մի ի շաբաթուջն ի պատիւ Աստուծոյ և կամ օգնել կարօտելոց՝ ոչ խնայելով ընչից և ստացուածոցն իւրոց, և զայլ արարողութիւնս գեղեցկագոյնս քան զբանականս, զորս ունէին մարդիքք, զորոց և երկարանամք ի թուելն, որք էին ամենեքեանն արտաքին գիտութիւնք և զգալի իմաստասիրութիւնք:

Իսկ իբրև սկսան մարդիքք վարժիլ և կրթիլ գրաւորականաւ օրինօք, զորոց և մանաւանդագոյնքն հայէին միայն ի յզգալի մարմինն, որպէս և յաճախապէս ցուցաւ: Յայնժամն կամեցաւ ծայրագոյն վարդապետն տիեզերաց

Աստուած տալ և ուսուցանել բանիւ իւրով ի ձեռն Քրիստոսի զաստուածաբանական գիտութիւնն, որ է գերբնական իմաստասիրութիւն և գերիվերոյապէս գիտութիւն գիտութեանց՝ առ ի տալ մեզ ծալել և ի միում կողման թողուլ, թէ զբանական և թէ զգրաւորական գիտութիւնս, որք են արտաքին գիտութիւնք և ի զգայականութենէ զօրութենէ ըմբռնելիք, և հետևիլ իմաստասիրութենէ աստուածաբանական գիտութեանցն, որք են վարդապետութիւնք աւետարանին Քրիստոսի, որք են հոգևորք, երկինք իմանալիք և անապականք: Որպէս է տեսանել ի բովանդակ օրինադրութեանցն Քրիստոսի, որք են վերնայինք և ի յստորնայնոցս փափկութեանց ամենևիմբ ի բաց հրաժարելիք: Եւ ոչ որպէս վարդապետութիւնք Մօսէսի և կամ այլոց մարգարէիցն, որք են օրինադրութիւնք զգալիք, ստորնայինք և մարմնավորացն փաղաքշելիք* և ապականելիք: Իսկ եթէ այսպէս է, որպէս և ակներև տեսանեմք, ուրեմն կորոյս ծայրագոյն վարդապետն արարածոց Աստուած զկարգ վարդապետութեանն ի յուսուցանելն իւրում իւրոյ անկատար աշակերտելոցն, վասն զի նախ Քրիստոսիւ ուսոյց զաստուածաբանական զգիտութիւնն զհոգևորն և երկնայինն և զկատարեալ իմաստութիւնն և ապա՛ զկնի ետ ծալել զնա՛ և խանգարել և ի խոր լռութեան պապանձեցուցանել զկատարեալն: Եւ յետ յառաջ էած և ետ ուսուցանել և յառաջացուցանել զանկատար զգիտութիւնս, այսինքն՝ զարտաքին զգիտութիւնն: Եւ կամ արարչականութեամբ զ[ստեղ]ծողն ամենից արարածոց աւերեաց զկարգ սահմանադրութեանն, զի կամեցաւ տալ գեղեցիկ զաւակացն նախ զհաստատուն կերակուրն մինչ էինն երեխայք և անկարգ ի մարսելն: Եւ ի կատարեալ հասակւոջն ի բաց էառ զհաստատուն ապուրքն ի նոցանէ և սկսաւ ստեամբք դիեցուցանել զնոսա թերևս կաթամբք և այս ո՛չ ի կեցուցանել մանկունս, եթէ ոչ առ ի մեռուցանել: Յասացելոցս հետևի, թէ եթէ պատգամ և օրինադրութիւն մարգարէին ձերոյ նախքան զգալուստ և զօրինադրութիւնն Քրիստոսի իցէր հռչակեալ, կարէ՞ր արդեօք ունիլ զտեղի, վասն զի գտանին և ոմանք օրինադրութիւնք, զորս համեմատին և օրինացն Մօսէսի և այլոց նախահարցն, որպէս և ի վեր անդր ճառեցաւ: Սակայն զկնի գալստեանն Քրիստոսի և լրման առ հասարակ օրինաց և վարդապետութեանց մարգարէիցն ևս և զկնի հռչակման աւետարանական վարդապետութեան Քրիստոսի, որոյ ոչ գոյ այլ իմն կատարելագոյն օրինադրութիւն վերնային, հոգևոր և անապական, ո՛չ կարէ Աստուած ի կատարեալ սահմանադրութենէն հրաւիրել զոք ի յանկատար օրինադրութիւն, մանաւանդ թէ քարշել ի յերկնայնոցն առ ըստորնայինս, ի յիմանալեացն՝ առ զգալիսս և ի յանապ[ակ]անացն՝ ի ապականացուս: Ուրեմն և եզերսցին բանքս:

Եւ դարձեալ հարցումն վասն կերակրոց սրբոց և անսրբոց և պատասխանատրութիւնք:

Բազմիցս հարցանեն վասն ոչ խտրելոյ ի մէնջ զկերակրոց ոմանց, անսուրբ կոչելով զկենդանիս զոմանս իբր զխոզն, զնապաստակն և զգազանս համայնս, նա՛ և ի թռչնոց զագռաւն, զբազայն, զարագիլն, զոպոպն և զայլս

* Գրիչն սկզբում գրել է ք, բայց հետո դարձրել է ց, որը ըստ էության սխալ է, ուստի վերականգնել ենք ք-ն:

բազումս: Եւ ի ձկանց, որք ոչ ունին զփողս և միշտ բամբասեն զքրիստոնեայսն, թէ ընդէ՞ր անխտիր ուտէք զկենդանիս անսուրբս, զոր Աստուած ի ձեռն Մովսէսի և մարգարէին մերոյ հրամայեաց չուտել երբէք, և այլն:

Առ այսպիսի առարկութիւնք պատասխանեցաք միշտ և տակաւին պատասխանեմք, թէ Տէրն մեր Քրիստոս իբրև առաքեաց զաշակերտսն իւր ընդ ամենայն երկիր, հրամայեաց նոցա, թէ և իբրև երթայք ի քարոզութիւնն թէ ի Հրէաստան (որք որոնէին ի մէջ կերակրոց սրբոց և անսրբոց և թէ ի հեթանոսս, որք ոչ խորշէին ի կերակրոց անսրբոց)՝ հրամայելով նոցա, թէ յոր տուն և մտանիցէք, և զոր առաջի ձեր դնիցեն, կերիջիք: Եւ դարձեալ ի Մատթեոսի 15.երրորդ գլուխն և ի 11.համարն ասէ. ո՛չ որ ինչ մտանէ ի բերանն, պղծէ զմարդ: Նմանապէս և ի Մարկոսի եօթն երրորդ գլուխն և ի 18. համարն հրամայէ ասելով, թէ ամենայն, որ արտաքուստ ի բերան մտանէ ի մարդ, ոչ կարէ զնա՛ պղծել, զի ոչ եթէ ի սիրտ նորա մտանէ, այլ յորովայնն և յարտաքս ելանէ և սրբէ զամենայն կերակուրսն: Եւ ասէր, թէ որ ինչ ի մարդոյն ելանէ, այն պղծէ զմարդն, զի ի սրտէ մարդկան ի ներքեուստ ելանեն խորհուրդք չարութեան՝ շնութիւնք, պոռնկութիւնք, գողութիւնք, սպանութիւնք, ագահութիւնք, չարութիւնք, նենգութիւնք, գիճութիւնք, չարակնութիւնք, հայհոյութիւնք, ամբարտաւանութիւնք, անզգամութիւնք: Այսք ամենայն չարիք ի ներքուստ ելանեն* և պղծեն զմարդն, և այլն: Եւ առ ի հաւաստութիւնն ճշմարտութեան հրամանին Քրիստոսի ցուցանել կամիմք ի ձեռն ապացուցի և բանականութեան: Նախ ասելի է, թէ մարդն է կենդանի և գոյացեալ ի յերկուց, այսինքն՝ ի հոգոյ բանականէ և ի մարմնոյ զգայականէ: Վասն զի ուտէ և զգայ ընդ կենդանեաց, որք են անբան կենդանիքն, որք կոչին ի ձէնջ սուրբք և անսուրբք: Եւ իմանայ և խոկայ ընդ բանականաց, որք են հրեշտակք և իմանալի գոյացութիւնք: Աստուստ հետևի ուրեմն, թէ որպէս և անբան կենդանիքն, որք են մարմինք ի մարմնոց մերոց, որք ուտեն զկերակուրս թէ սուրբս թէ անսուրբս, ոչ համարին պղծեալք և օրինազանցք, որպէս և կատուն ուտելով զմուկն ոչ համարիք պղծիլ նմա՛, ուստի և միշտ փարիք զնովաւ և կամ հաւն, կամ եզն ուտելով աղտեղիս, ոչ համարիք պղծիլ նոքօք: Նմանապէս և եթէ ի բաց դնիցեմք զբանականութիւնն, այսինքն՝ զբանական հոգին մարդոյն, յայնժամն ուտելն մեր թէ սուրբս, թէ անսուրբս ոչ առնէ զմարմինս մեր սուրբս կամ պիղծս և կամ օրինազանցս: Վասն զի ամենայն կերակուրք ի պահպանութիւն կենդանական զօրութեանն հաստատեցան յաստուածայնուստ իբրև սպեղանի իմն, որով կենդանին կարասցէ ուտելովն պահպանել զգայական և զկենդանական զօրութիւն բնութեանն իւրոյ: Ուրեմն կերակուրք համայնք ծախին ի կենդանական զօրութենէ մերմէ և ոչ ի բանականութենէն, վասն որոյ և ոչ կարեն հպիլ և տալ պղծել զհոգին մեր: Յասացելոցս հետևի, ուրեմն, թէ կերակուրք սուրբք և կամ զորս համարիք անսուրբք, ոյք են յառաջեդեալք կենդանական զօրութեանն մերոյ, այսինքն՝ ի պահպանութիւն անհատին, որ է զգալի մարմինն մեր, որ ևս է անսուրբ և պղծութեամբ լիք: Վասն զի և ըստ ձերում դիտաւորութեանն ևս մարմինն մարդոյն է առաւելապէս անսուրբ, ուստի և ի միզեն ձեր ոչ կամիք թոյլ տալ, զի կաթիլ մի և եթ կաթեցուցանել ի վերայ ձորձոյ կամ հանդերձի ձերոյ, իբր զի մի լինիցի տալ և պղծել զհասարակ մարմինս ձեր

* Ձեռագրում ելանելեն է: Ուղղել ենք:

գոնեայ և զծնրադրութիւնս և զաղօթս համանգամայն: Թէպէտ և թողումք աստանօր զայլ պղծութիւնս, զորս ամբարեալ դիզին յորովայնի մերում, զորոց մանրամասնաբար որոնելն մեր լինի յանդգնութիւն, մանաւանդ թէ և երկարութիւն բանից, որք են զազրութիւն զազրութեանց և պղծութիւն պղծութեանց և ամենեիմբ գարշելիք: Վասն զի մինչդեռ զջուրն ոչ էք ըմպեալ, եթէ կաթի ի վերայ հանդերձի ձերոյ, ոչ համարիք պղծիլ և իբրև ըմպէքն, որ երթայ յորովայն և անդի յելանելն եթէ կաթայ կաթիլ մի, յայնժամն համարիք պղծիլ: Արդ ուստէ՞ առ ջուրն այն մաքուր զպղծութիւնն իւր, եթէ ոչ ի յորովայնէ մարդոյն: Ուրեմն մարդն է անսուրբ, զոր ամենայն ինչ սուրբ, որ ժամ[ա]նէ անդ, լինի պղծեալ ի մարդոյն և ոչ թէ ժամանօղքն են պիղծք: Իսկ եթէ այսպէս, զորմէ և ասացաքն, ուրեմն եթէ անսուրբ և զազրութեամբ լի մարմինս այս զհազար ամ ուտիցէ զկերակուրս սուրբս և այն ևս իջեալ ի ցօղոյ երկնից, իսկոյն մտանէ ի տեղն ինչ, որ ամենեիմբ է անսուրբ: Վասն զի պատառ մի, զորս համարիս սուրբ, առեալ դիցես ի բերանի քում և անդրէն հանեալ ի բերանոյ քումմէ միւսանգամ կամիցիս մուծանել ի ներքս, ասեմ, թէ ո՛չ կարէս կլանել, վասն խղճի մտացդ, զի թըւի յայնժամն, թէ պղծեալ պատառ է այն և ձգես առժամայն արտաքս: Յայտ ուրեմն է, կերակուրք սուրբ ի մուծանելն ի շրթունս առժամայն ժամանեն ի դրունս պղծութեանց: Եւ ո՛չ թէ կերակուրքն այնք երթալք խառնին և կամ միանան ընդ աննօսր և ընդ անմարմին զօրութեանն բանականի հոգոյն, որ է յոյժ ծիծաղելի:

Տացուք, թերևս, թէ կերակուրք, զորս ուտեմք, զօրութիւնք նոցին խառնին և միանան ընդ անմարմինս և զուտ իմանալ[ի] հոգւոյ մերում, որ է կարծիք խելագարաց, սակայն պղծութիւն կերակրոյ իմիք ոչ կարէ տալ կամ պղծել և յաղթահարել զպատուականութիւն իմանալի և անշօշափելի հոգւոյն: Վան զի աղտ մարմնոյն ոչ կարէ անցանել ի հոգին և յանդ[ր]աղարձապէս: Ուրեմն հոգին պղծի յայնմ, ուստի կարիցէ ըն[դ]դիմանալ յինքեան և կարիցէ հպիլ ի յինքն: Սակս որոյ հրամայէ Քրիստոս, թէ կերակուր ոչ պղծէ զմարդն, եթէ ոչ շնութիւնք, պոռնկութիւնք և այլքն, որպէս ի վեր անդր ճառեցաք, որք նոքայ ամենեքեանն ելանեն ի նոյնոյ բանականութենէ հոգոյն, որք են հուպ ընդ հոգոյն և կարեն շօշափել զհոգին և անընդմիջապէս ելանեն ի բանականէն և ի ձեռն գիտութեան, որ հաւանի անձնիշխան զօրութիւն հոգւոյն առ ի առնել զայնոսիկ, զորս ի վերոյ ճառեցաւ: Եւ դարձեալ ցուցանի և ի ձեռնարկութիւնս մեր և բանականութեամբ և ի ձեռն յարացուցի: Վասն զի տեսանի յամենայն էակս և ի գոյացութիւնս միշտ աղօտագունիցն յաղթահարիլ ի հզօրագունիցն և ոչ անդրադարձապէս: Որպէս է տեսանել աստեղացն ի յարեգակնէն և քաղցրութիւնք անձրևաց և գետոցն ի յաղտաղտկութենէ* ծովուց և այլն: Ասելի է ուրեմն, թէ եթէ բանական հոգին մեր յաղթահարիցիւր ի յանսուրբ կերակրոց, ուրեմն կերակուրք ապականացուք պարտ էին հզօրագոյնք և պատուականագոյնք գոլ քան զիմանալի գոյացութիւն, այսինքն՝ քան զհոգին մեր: Հետևէր ուրեմն, թէ աղբանիւթ իրք գերազանցէին զիմանալեօքն, որ է յոյժ անտեղի և հեռի ի բանականութենէ: Ուրեմն կերակուրք մարմնականք՝ թէ սուրբք և թէ զորս կարծէք անսուրբք, ոչ կարեն ամենեիմբ հպիլ և շօշափել զբանական և մնացական մասն մարդոյն, որ է հոգին: Վասն զի ոչ են պատուականագոյնք և հզօրագոյնք քան

* Ձեռագրում գրված է յաղտաղոկութենէ: Ուղղել եմ որպես ակնհայտ վրիպակ:

զնա՛, որպէս և բացայայտեալ եղև: Եւ առ ի հաստատութիւն բանիցն Քրիստոսի և դիտաւորութեան քրիստոնէիցս տացուք և ապացոյց և զօրինակ մի՝ հարցանելով թերևս, թէ եթէ զպատուական ակն մատանւոյ առն ունիք, զի իցէ թերևս կայծ և կամ լիգրոն և բնութեամբ ջօվիար ըստ լեզուի ձերում: Եւ լինցի յանկարծ անկանիլ ի մէջ զազրալի և աղտեղի աղբից և մնասցէ անդ թերևս ժամս բաւականս, մի՞թէ կարիցէ աղբն այն յաղթահարել և կամ վնասել և կորուսանել զպատուականութիւն նորին, որոյ բնութիւնն է պատուականագոյն քան զբնութիւն աղբոյն զազրութեան, թէպէտ և երկոքեանն են մարմինք, որք կարեն թերևս շօշափել զիրեարս: Ասեմք, թէ ամենևիմբ ո՛չ, վասն զի եթէ յաղթահարիցիւր ի նմանէ, ուրեմն զազիր իրքն այն հզօրագոյն և պատուականագոյն պարտ էր լինիլ քան զպատուականութիւն և ջօվիար լիգրոնին և կայծին ասացելւոյ: Ուրեմն և սոյնպէս և սոյն կերպիւ պատուականագոյն ակն է և գերբնականագոյն ջօվիար, այսինքն՝ բանականութիւն մարդոյն, քան զամենայն գոյացութիւնս, որք ստեղծան յԱստուծոյ: Վասն զի է ի պատկերի Աստուծոյ առաւել նմանութեամբ, քան զհոգիս հրեշտակացն: Յայտ եղև ուրեմն, թէ մարմնաւոր իրք և կամ կերակուրք ոչ կարեն մերձենալ ի բանական զօրութիւն հոգոյն և ոչ կարեն հաղթահարել զնա և կամ պղծել, որպէս և առասպելաբանեն իմաստասերքն ձեր, ուրեմն և այլն: Եւ դարձեալ առ ի օրինակ և ապացոյց դիտաւորութեանս մերոյ առնումք զարեգակնն, որ թէպէտ անկանի ի վերայ անսուրբ տեղաց և բազմաց աղտեղութեանց, սակայն ինքն ոչ ոք կերպիւ կարէ աղտեղանալ և [յ]աղթահարիլ* ի նոցունց, վասն զի է պատուականագոյն և հզօրագոյն քան զնոսա, մինչ զի բազմիցս սրբէ և մաքրէ զաղտեղութիւնս և զզազրութիւնս բազմաց իրաց և ինքն մնա սուրբ և միշտ մաքուր և ոչ ըմբռնի ի [յ]աղտեղութե[ան]ց և ի յումեքէ: Նմանապէս և բոլոր արարածք գոն և միշտ գտանին ի յամենայնում՝ թէ սուրբք և թէ աղտեղիքք: Վասն զի ոչ գոյ տեղի իմն, ո՛ր ոչ գուցէ համանգամայն և Աստուած: Եւ ոչ ենթագոյանայ ինչ, եթէ ոչ՝ Աստուծով: Եւ ոչ կայանայ իր ինչ թարց Աստուծոյ և կամ ուր ո՛չ իցէ Աստուած, վասն զի ո՛ր ոչ կամիցի լինիլ Աստուած, անդ է ամենևին ոչինչ և պակասութիւն ընչին: Եւ յասացելոցս հետևի, թէ որպէս ի ծագելն արեգական ի վերա անսուրբ իրաց ոչ աղտեղանայ ինքն և ի յամենայն ուրէք ներկայ լինիլն Աստուծոյ ոչ յաղթահարի ի յանսուրբ իրաց և գոյացութեանց: Այսպէս և բանական մասն մարդոյն, որ է պատուականագոյն և իմանալի գոյացութիւն մարդոյն, ոչ աղտեղանայ կամ պղծի և յաղթահարի, եթէ մարմինն, որ է զգալի մասն մարդոյն, ուտիցէ զկերակուրս, զորս անսուրբ կարծի ի ձէնջ՝ թէ խոզենիս և նապաստակս կամ թէ զժժմունս և զայլս մսեղիս, վասն զի է գոյացութիւն անմարմին և պարզ էութիւն, ուրեմն և այլն: Եւ դարձեալ ցուցանի ի ձեռն բանականութեան ասելով, թէ բանականութիւն մարդոյն, այսինքն՝ հոգին մեր է աննիւթ և անշօշափելի և պարզ իմն գոյացութիւն, մանաւանդ թէ և ի պատկերի Աստուծոյ: Իսկ մարմին մեր է ի տարերաց չորից՝ տեսանելի, շօշափելի և ըմբռնելի: Ուրեմն, տարբերութիւն բազում գոյ ի մէջ երկոցունցն, վասն որոյ ոչ կարեն ամենևիմբ անցանել և հպիլ առ իրեարս, ուստի կարասցեն կերակուրք անսուրբք մերձենալ ի բանական զօրութիւնն առ ի պղծել զնա՛: Ուրեմն կերակրովք անսրբիւք ոչինչ նուազի հոգին, այսինքն՝ բանականութիւն մարդոյն և կամ կերակրովք սրբովք ոչինչ յաւելանի ամենևին: Եւ

* Ձեռագրում աղթահարել է: Ակնհայտ սխալ է, ուստի ուղղել ենք:

հետևապէս կերակրովք ս[ր]բովք ոչ սրբի ևս մարմինն, զի է ապականելի և կերակրովք անսրբովք ոչինչ պղծութիւն յաւելանի ի մարմինն, զի է իսկապէս աղտեղի և լի ամենայն գարշութեամբ ներքոյ և արտաքոյ ի յորովայնս, ի յաղիս, ի փորոտիս, ի բերանս, ի քիմս, յոսկերս և ի բոլոր անդամս մարմոյն, որպէս և յաճախապէս ցուցաւ: Իսկ եթէ այսպէս է, զորմէ ասացաք, ուրեմն ամենայն ինչ սրբէ սրբոց մանաւանդ, որք գոհութեամբ ընդունին ըստ սրբազան առաքելոյն և աշակերտին Քրիստոսի, որպէս և ուսաւն ի վարդապետէ իւրմէ ճշմարտէ և բաւականասցէ:

Բանական ենթադատութիւնք և ընդդիմադրութիւնք ընդդէմ բանականի մասինն մարդոյն, որ է բանական հոգին: Եւ պատասխանատրութիւնք նուաստէ Ստէփանոսէ ապիրատէ:

Ընդդիմութիւնք. Ամեն կենդանի առնու զգոյացութիւնն իւր ի ծնողէն, իսկ մարդն է կենդանի: Ուրեմն և մարդն առնու զգոյացութիւնն իւր ի ծնողէն: Դարձեալ, զոր ինչ առնու կենդանին ի ծնողէն, է ապականելի, իսկ մարդն է կենդանի: Ուրեմն և մարդն է ապականելի: Վասն զի ոչ ունի կենդանին իր իմն, որ ո՛չ իցէ առեալ ի ծնողէն և հետևապէս ո՛չ կարէ ունիլ ինչ, ուստի կարասցէ մնալ զկնի վաղճանին: Ուրեմն ոչ ունի մարդն ինչ, զոր կարասցէ [մնալ] զկնի վախճանին:

Պատասխանելի է, թէ զի թէպէտ մարդն դասի ընդ սեռիւ, որ է կենդանին, սակայն ոչ բոլորովիմբ: Վասն զի մարդն գոյանայ ոչ միայն ի զգայականութենէն, այլև ի յիմանալւոյն և ի կարողութենէն Աստուծոյ, սակս որոյ եթէ ոչընչանայ զգայականութեամբն, սակայն տնէ և իմանալեաւն, վասն զի իմանալի զօրութիւնն ոչ առնու զգոյացութիւնն և զլինելութիւնն իւր ի ծնողէն, վասն զի է պարզ և անօսր գոյացութիւն, փչեալ ի յԱստուծոյ և ստեղծեցեալ ի յոչընչէ և ի նիւթոյ զկնի նկարման անդամոց մարդոյն: Եւս և ոչ ունի զներհակութիւն և կամ զհակառակ գոյացութենէն իւրոյ, որպէս և է տեսանել ի յզգայականութեանն, որ դնի ի ներքոյ քառից ներհակաց: Ուստի և կրեն զապականութիւնն, իսկ եթէ ոչ ունի զներհակ ինքեան և կամ զհակառակ հետևի, ուրեմն թէ ոչ կրէ զապականութիւն, այլ կարէ մնալ մշտնջենապէս:

Ընդդիմութիւնք. զի թէպէտ ըստ քեզ զօրութիւնս այս չիցէ առեալ զգոյացութիւն իւր ի ծնողացն և ի նիւթոյ, սակայն ոչ կարէ ներգործել, եթէ ոչ ի ձեռն զգայականութեան, հետևապէս և ոչ ունէր զգոլն իւր յառաջ քան զնիւթ և զգործիք զգայականութեանն: Եւ այսպէս տեսանի, թէ էառ զգոյացութիւնն և զգոլն իւր յորժամ սկիզբն էառ նիւթ զգայականութեանն իւր ի ծնողէն: Իսկ որովհետև ոչ կարաց ենթագոյանալ թարց զգայականութեանն, այսինքն՝ կենդանական զօրութեանն, ուրեմն և ոչ կարէ գոլ և ենթագոյանալ թարց զգայականութեանն: Վասն զի ի ապականիլ ենթակային և ոչ կարէ ենթագոյանալ ստորոգեալն և կամ ի բառնիլ պատճառին ոչ կարէ մնալ և պատճառի նորին և այլն:

Եւ դարձեալ ոմն, որ շօշափէ զմարմին, է մարմին և պարտի լինիլ մարմին, իսկ տեսանի, թէ հոգին շօշափէ զմարմինն, ուրեմն հետևի, թէ հոգին է մարմին: Ցուցանի եզրակացութիւնս, վասն զի հոգին թարց շօշափելոյ* զմարմինն ոչ կարէ տալ սանձել զմարմինն, զոր օրինակ, եթէ հողմն ոչ

* Ձեռագրում գրված է՝ շաշափելոյ:

շօշափէր զտունկս, ուրեմն ոչ կարէր շարժեցուցանել զտե[ր]ևունս և սաղարթս նորա, նմանապէս, եթէ հոգին ոչ ազդեցուցանէր կամ ներգործէր զզօրութիւնն իւր ի մարմինն, ուրեմն ոչ զսպէր մարդն զինքն ի վատթար արարմանց, որպէս և ի յայլ կենդանիսն է տեսանել: Վասն զի միայն մարդն է, որ ի ձեռն ազդեցութեան բանին փախչի ի հեշտալոյն, որք են օրէնք զգայականի բնութեանն և հետևի համեստին, որ է ախորժ բանականին և ներհակ զգայականութեանն: Յասացելոցս հետևի, թէ ուրեմն հոգին շօշափէ զմարմինն: Իսկ եթէ ոչ շօշափէրն, ուրեմն ոչ կարէր ներգործել ի նմա և եթէ ներգործէ ի նա՛, ուրեմն և շօշափէ: Եւ որովհետև շօշափէ զմարմինն, ուրեմն հոգին է մարմին և այլն:

1. **Պատասխանի.** զի թէպէտ էառ բանական զօրութիւնն զսկիզբն իւր և զլինելութիւն, յորժամ առեալ եղև նիւթ և կերպաւորումն զգայական և կենդանական զօրութեանն իւրոյ ի ծնօղացն, սակայն ոչ էառ զսկիզբն իւր և զլինելութիւնն ի նոցունց կենդանական և զգայական նիւթոյն և կամ ի ծնօղացն, վասն որոյ և կարէ մնալ միշտ և ենթագոյանալ ինքեամբ, վասն զի թէպէտ զկնի սաղմն առնման և կերպաւորութեան նիւթոյն յառաջ ածի հոգին, սակայն մինն յառաջ ածի ի նիւթոյ ծնօղացն, իսկ միւսն ի ոչընչէ և ի ամենակարողութենէն յԱստուածոյ: Եւ այսպէս զգայականութեան նիւթն ոչ է պատճառ գոյացութեան իմանալի զօրութեան հոգոյն, որով կարիցես ասել թերևս, թէ ի բառնիլ պատճառին դարկան* և պատճառելի նորին: Թէպէտ և ի յստորայինս ևս ոչ կարէ միշտ ի բառնիլ պատճառացն բառնիլ և պատճառելեացն նոցունց հարկաւորապէս: Զոր օրինակ ծնօղք են պատճառք զաւակացն իւրեանց և ճրագ է պատճառ այլոց ճրագացն: Եւ բազմիցս տեսանի, զի ոչնչանան ծնօղքն, որք են պատճառքն, մնալով տակաւին զաւակացն, որք են պատճառելիքն և հետևապէս, կարեն խանգարիլ նախկնոյ ճրագացն, մնալով պատճառելեացն նոցունց, որք են այլք ճրագունքն սկսեալք ի պատճառէն իւրեանց: Որք թէպէտ սոքայ պատճառելիք, և նմանք սոցին կախապէս առնուն զլինելութիւն և զգոլն իւրեանց ի նախկնոյ ասացեալ պատճառացն իւրեանց՝ ի ծնօղացն, այլ ի յԱստուծոյ առնու զգոյացութիւնն իւր և զլինելութիւն անընդմիջապէս թարց կարօտութեանն նիւթոյ և զօրութեան ծնօղացն:

2. Եւ դարձեալ առ երկրորդ ձեռնարկութեանն պատասխանելի է, թէ ամենայն, որ շարժեցուցանէ զմարմին, ոչ է միշտ հարկաւոր, զի իցէ մարմին և ինքն, վասն զի կարեն իմանալիքն, որք են անմարմինք, տան շարժել զմարմինս, որպէս է տեսանել և ի երկնային շարժմունս, որք շարժեցուցանեն և կամ շարժին՝ մին մարմին գոլով ի միւսոյն, որ է անմարմին, զոր օրինակ երկինք և աստեղք, որք են մարմինք**, շարժին ի յերկուց անմարմին շարժողաց, որ մինն տայ շարժել զերկինս յարևմտից առ յարևելս և մինն շարժեցուցանէ զաստեղս մոլորակացն յարևելից առ յարևմուտս, որք են երկու, իմանին հոգիք, այսինքն՝ հրեշտակք կարգեալք ի յանշարժ շարժողէն: Ուրեմն կարեն իմանալի գոյացութիւնքն շօշափել և տալ շարժեցուցանել զմարմինս թարց յեղափոխման նոցա ի մարմին: Եւ առ ի հաստատութիւն

* Ձեռագրում այսպես է. գուցե կարելի է կարդալ՝ դատարկանայ:

** Ձեռագրում անմարմինք է: Դարձրել ենք մարմինք՝ ելնելով շարադրանքի տրամաբանությունից:

ձեռնարկութեանս մերում ասելի է, թէ բովանդակ մարմինք և անմարմինք շարժին ի միոյ ծայրագունեոյ յանշարժ շարժողէ, որ է անմարմին, աննիւթ և իմանալի ինքնագոյացութիւն: Իսկ ըստ քումդ առարկութեան, եթէ իմանալի զօրութիւնն ոչ կարէր շօշափել զմարմինն, եթէ ոչ և ինքն լինիցիւր և մարմին:

Ուրեմն ամենայն իրօք ինքն հետևիւր, թէ կամ Աստուածն պարտ էր լինիլ մարմին և շօշափեալ ի յզգայականութենէ և կամ բովանդակ երկնային և երկրային մարմինքն շարժեին ի յումեմնէ մարմնոյ և ի յզգալի գոյացութենէ, որ է յայտնի ստութիւն: Իսկ եթէ իմանալիքն կարեն շարժեցուցանել զերկնային մարմինս և հետևապէս անմարմին և աննիւթ ինքնագոյ և անհաս Աստուածն կարէ շօշափել և շարժեցուցանել զերկնային և զերկրային զմարմինսն, գոլով ինքն զուտ և պարզ իմանալի էականութիւն, ուրեմն և հոգին կարէ շարժեցուցանել զմարմինն թարց լինելոյ նմա մարմին, ուրեմն և այլն:

Ընդդիմութիւնք. ի բառնիլ պատճառացն տակաւին մնալ պատճառելեացն, եթէ ժամանակաւոր ասես, ընդունիմ, իսկ եթէ մշտնջենապէս, ուրանամ: Եւ բան սորին է այս. վասն զի ի յզգալիսս թէպէտ մնան պատճառելիքն թարց պատճառին իւրեանց, սակայն ո՛չ մշտնջենապէս: Արդ որովհետև հոգին մնալ ասացեր մշտնջենապէս, ուրեմն և ըստ մերում ապացուցութեանն և հոգին ևս ոչ կարէ մնալ մշտնջենապէս, և այլն:

Պատասխանի. ամենայն պատճառելիք, որք յառաջ ածին միջնորդաբար ի ձեռն արարածոց, թէպէտ ոչ կարեն մնալ մշտնջենապէս, սակայն պատճառելիքն այնոքիկ, որք յառաջ ածին ի նախկնոյ պատճառէն, այսինքն՝ յարարչէն և ոչ միջնորդաբար, կարեն մնալ մշտնջենապէս: Եւ բան սորին է, վասն զի թէպէտ Աստուածն է պատճառ հանուրց արարածոց՝ թէ զգալեացս և թէ իմանալեացն, սակայն ոչ նոյնաբար, այլ զանազանաբար: Վասն զի մինչ ստեղծանէ զիմանալիսն և զերկնային զշարժմունս և զզօրութիւնս զերկինս, և զաստեղս, և զտարրս, ստեղծանէ թարց միջնորդի և անկախապէս յայլմէ: Բայց մինչ ստեղծանէ զզգալիսս, ստեղծանէ ի ձեռն միջնորդի, որք են երկնային մարմինքն, տարրքն, ծնօղքն և նիւթքն, որպէս և Ադամ եստեղծ ի տղմոյն Դամասկոսի և ի յերկրէ: Նա՛ և որդիք ի ծնօղաց, ձկունք և լողակք ի ջուրց, ժժմունք ի խոնաւութենէ ջուրց, ցեցք և ուտիչք ի փայտից, ի մրգաց և ի պանրից է, բոյսք ի սերմանեաց և ի յարմատոց և սոքայ առ հասարակք ի ներգործութենէ յերկնայնոց շարժմանց և ի տարերաց և այլն: Ուրեմն, ասելի է, թէ ամենայն պատճառելիք, զորս յառաջ ածին ի յաստուածայնուստ միջնորդաբար, արդարև ոչ կարեն մնալ թարց պատճառին իւրեանց մշտնջենաբար, սակայն պատճառելիքն, որք յառաջ ածին անընդմիջաբար և միայն կախապէս ի յԱստուծոյ, կարեն մնալ մշտնջենապէս: Յուցանի եզրակացութիւնս, վասն զի պատճառելիքն միջնորդաբար են և ի երկրորդաբար պատճառելեաց և յառաջ ածին ի ձեռն ապականաց պատճառաց և դնին ի ներքոյ ներհակաց, ուստի և ոչ կարեն մնալ* մշտնջենապէս: Իսկ պատճառելիքն, որք առին զլինելութիւն իւրեանց անընդմիջաբար և ծայրագոյն պատճառէն, որ է անեղ և անապականելի, նա՛ և ոչ են ի ստոր և ներհակաց, ուրեմն կարեն մնալ մշտնջենապէս: Մանաւանդ, թէ ամենայն ապականութիւնք պատահի ի ձեռն ներհակաց: Եւ տեսանի, թէ համայնք

* Ձեռագրում կրկնված է՝ մնալ մնալ:

պատճառելիքն, որք անընդմիջաբար ընկալան զլինելութիւնն իւրեանց, են գոյացութիւնք իմանալիք և գոյացեալք ոչ ի նիւթոյ և ոչ ունին իր ինչ, որով կարասցին հաղթահարիլ և կամ կրել զընդդիմութիւն: Որպիսիք և երկնային շարժմունքն, մոլորակքն և առհասարակ աստեղքն, թէպէտ սոքայ են մարմինք, սակայն ի հինգերորդ տարրից, որք ոչ ի ստոր անկանին ներհակաց քառից տարրերացն: Ուրեմն, որքանաբար կարեն մնալ իմանալիքն, որք են հոգիք հրեշտակաց և հոգին բանական զկնի վաղճանի մարդոյն, ուրեմն և այլն: Դարձեալ տեսանի, թէ երկու մարմինք ոչ կարեն ընթակայիլ ի միում ենթակայում: Իսկ եթէ հոգին էր մարմին, ոչ կարէր ընդ միւսոյ մարմնոյն լինիլ ի միում ենթակայում, որք են մարմինն՝ միսն, ոսկ[ե]րքն, արիւնն կամ այլ անդամքն: Իսկ եթէ երկու մարմին ոչ կարեն լինիլ ի միում ենթակայում, որ է մարդն և հետևապէս մարդն ունի զհոգի, ուրեմն հոգին ոչ է մարմին, ուրեմն և այլն:

Ընդդիմութիւնք. հոգին զոր ասեսն, թէ է իմն գոյացութիւն պարզ և ոչ նիւթոյ, երևի գոլ սուտ: Վասն զի, եթէ հոգին ոչ էր ի նիւթոյ, կարէր ներգործել թարց նիւթոյ: Եւ կամ երբեմն գոլ ըստ ինքեան յառաջ քան զուգաւորիլն ընդ մարմնոյ և նիւթոյ: Բայց որովհետև տեսանի, թէ յառաջ քան զնիւթն ոչ կարաց ենթագոյանալ և հետևապէս ոչ կարէ ներգործել թարց նիւթոյ, ուրեմն է մարմին և ի նիւթոյ և ոչ իմն գոյացութիւն արտաքոյ մարմնոյ: Ցուցանի եզրակացութիւնս. վասն զի թէ հոգին ոչ էր ի գոյացութենէ մարմնոյ, պարտ իսկ էր նմա՛ ունիլ զնոյն կատարելութիւն գիտութեանն ի սկզբան լինելութեանն իւրոյ, զոր և ունիլ կարող էր զկնի կատարելութեան հասակին և մարմնոյն, զոչ երբէք տեսանի այսպէս: Վասն զի երեխայքն, որք ոչ ունին զկատարելութիւն հասակին, ոչ երևոցեն զնշան իմն բանականութեան, որով կարասցես ասել, թէ այս ինչն է բանական ներգործութիւնն և ոչ տարբերին ի յայլոց կենդանեաց ամենևին: Եւ թերևս գոն կենդանիք բազումք առաւելապէս իմաստնագոյնք քան զերեխայսն, այսինքն՝ գառինք և այլ մատաղ ձագք անասնոց, որք առժամայն ի ծնանիլն իսկոյն ճանաչեն իւրաքանչիւրքն զմայրս իւրեանց, ուստի և ի մէջ հազարաց որոնեալ գտանեն զմայրս իւրեանց և ի ստենէ այլոց ոչ երբէք կամին ճաշակել զկաթն, զոր և զամսեայ երեխայք մարդոյն ոչ կարեն ճանաչել այնքան պարզաբար: Յասացելոցս հետևի, թէ եթէ հոգին ոչ էր մարմին, որ ըստ աճման և զարգացման հասակին աճիւր և զարգանայր ընդ նմին, կարէր ուրեմն ներգործել զբոլոր գիտութիւնն իւր ի յերեխայս, որպէս և ներգործէ ի հասակի կատարելութեան մարդոյն և ի հնանալն: Իսկ արդ, որովհետև տեսանի, թէ հոգին ոչ կարէ կատարելութիւնն իւր ներգործել ի խակութենէ մարմնոյն, նա՛ և ոչ կարէ թարց մարմնոյն արտադրել ինչ և կամ երևոցել զնշան բանականութեանն իւրոյ մինչև զարգանալ գործեաց անդամոցն, յայտ ուրեմն է, թէ հոգին է մարմին և գոյացեալ ի նիւթոյ, որ զոյգ ընդ գործեաց անդամոցն զարգանայ և օր աւուր հաւելու ի կատարելութիւն, ուրեմն և այլն:

Պատասխանելի է, թէ հոգին ոչ ներգործել կարէ թարց մարմնոյ և այս երբեմն այսպէս, ընդունիմ, իսկ հոգին է մարմին և կամ ամենևին ոչ կարէ ներգործել թարց մարմնոյ, ուրանամ: Եւ այս ցուցանի ի ձեռն բացագոյն յառացուցի. բազմիցս արգելանի գիտութիւն բժշկութեանն մինչ բժիշկն ունիցի զխօթութիւն անդամոց և կամ ոչ ունիցի առարկայ բժշկութեան, այսինքն՝

զնիւթ դեղորէիցն* առպատրաստ կամ համեմատ տկարութեան ի ձեռին: Սակայն ի խօթութենէ բժշկին և պակասութեան դեղորէիցն ոչ ի բաց բառնի գիտութիւն բժշկութեանն: Նա ևս տեսանեմք, թէ ոմն հանճարեղ պատկերահան, որ է վարժե[ա]լ սքանչելի գիտութեամբ արուեստին իբր զՎենեցիանն Նիկօլօ Քաշանա և զԲօմբէլին, որք էինն ի ժամանակի մերում, որ և ունիմք զսքանչելի ձեռակերտ սոցին անհամեմատ: Եւ այնպիսի սքանչելի նկարումն սոցայ և բացերևութիւն գիտութեանց նոցին երևի և ներգործէ, յորժամ առպատրաստ ունիցին զբովանդակ նիւթ և գործիքքն, որք պատկանին առ ի արտադրումն պատկերին, այսինքն՝ թէ դեղորայքն յոգնյորակք և թէ կտաւ կամ այլ գործիքն առհասարակք: Եւ յորժամ անպատրաստ լինիցին նիւթք պատկերահանութեանն, որք են ասացեալ գործիքքն, այնպէս տկարանան երկոքեան հանճարեղքս և կամ առհասարակ նկարիչք, որք ոչ ոք կերպիւ կարեն արտադրել զներտրամադրեալ գիտութիւնն իւրեանց և մնայ այն այնպիսւոյ գիտութեան պարապ ի ներգործութենէ իւրմէ: Արդ զինչ պարտիմք ասել առ այս, մի՞թէ սակս պակասութեան նիւթոց և գործեաց արհեստին պակասի կամ ոչընչանա գիտութիւն պատկերահանութեանն և կամ որովհետև սոքայ, որք ի ձեռն դեղորէից և նիւթոց յառաջ ածեն զպատկերն, ուրեմն գիտութիւն սոցին յառաջ ածի ի գունոց և որակաց կամ նիւթիցն, ոչ ապաքէ[ն] ծիծաղելի է մտածելն զայսցանէ: Ըստ սմին օրինակի և սոյնպէս ևս ասելի է և վասն իմանալի հոգւոյն, որ է բուն իսկ բանական գիտութիւն և իմաստութիւն բանականի գոյացութեանն, զոր թէպէտ երբեմն ոչ կարէ թարց** գործեաց արտելուզանել և արտադրել զարհեստ գիտութեանն իւրոյ, սակայն ոչ հետևի թէ գիտութիւնն յառաջ ածի ուրեմն ի գործեաց անդամոցն և կամ զարգանայ և կամ զյոգ ընդ հասակի անդամոցն: Վասն զի գործիք երեխայիցն, որովհետև ոչ են առպատրաստք կամ ընդունակք կատարեալ գիտութեանն, սակս դեռամածելի ուղեղան և խակութեան խառնուածոց և այլոց գործեացն: Վասն որոյ և զօրութիւն ներգործութեան հոգոյն մնա պարապ ի ներգործութենէ իւրմէ: Եւ ոչ թէ անդամք և զգայականութիւնքն արտադրեն զգիտութիւնքն, որ ոչ է նիւթ կամ մարմին, այլ իմն իմանալի զօրութիւն, որ ոչ է մարմին և կամ գոյացութենէ մարմնոց: Եւ առ ի հաստատութիւն եզրակացութեանս տեսանեմք, թէ որ ինչ է մարմին, ոչ կարէ գոլ ի բազում տեղիս, զոր օրինակ, եթէ ես, որ եմ ի մարմնի, եթէ գոմ ի տան, ոչ կարեմ գոլ ի յագարակի եւ եթէ գոմ ի եկեղեցւոջ, ոչ կարեմ լինիլ ի փողոցի, սակայն տեսանի, թէ գիտութիւնն մեր ոչ պարունակի ի մարմնի մերում սեւեռմամբ: Այլ բազմիցս թողու մարմինս մեր և ինքն յառաջանայ անդր քան զասպարէզս և զծովս լայնատարածս*** և թափանցէ զլերինս կարծրս և դժուարինս սլանալով ի թևս ամպոց և անդր քան զաստեղս և զդիրս աստեղաց, հասուցանելով զինքն մինչև զիմանալիսն, մոռանալով զօթևանն իւր զմարմին զժամս բաւականս: Յասացելոցս հետևի ուրեմն, թէ իմանալի զօրութիւնն մարդոյն, այսինքն՝ հոգին ոչ արտադրի ի մարմնոյ և ոչ է մարմին և ոչ

* Ձեռագրում դէղորէիցն է:

** Ձեռագրում թարդ է: Ուղղել ենք, ելնելով բովանդակությունից:

*** Ձեռագրում գրված է լայնադարածս: Համարել ենք ակնհայտ վրիպակ և ուղղել:

ներգործէ միշտ մարմնով, թէպէտ երբեմն կարօտանայ գործեաց անդամոցն մինչև համեմատեսցեն զինքեանս ի ընդունակութիւն գիտութեան, և ա[յ]սքան առ այս բաւականասցի:

Գլուխ երկրորդ. Երևի, թէ հոգիք մարդկայի[ն]ս սեռի ոչ պարաւանդին ի մեղաց նախահօրն:

Ընդդիմութիւնք. Տեսանեմք ի ստորնայինս, զի դատաւորք աշխարհիս ոչ ստորադրեն զորդին մարդասպանիցն մահու, եթէ ոչ զհայրն, զոր արար սպանումն. նա՛ և ոչ փառաւորին զորդիս չարագործս սակս բարեգործութեանն հօրն: Եւ եթէ ստորնայինք, որք են պատճառելիքս, ոչ առնեն այսպէս, ուրեմն և Աստուած, որ է պատճառ ամենայնի, ոչ առնէ զայսպիսիս: Վասն զի հռչակի, թէ Անակ հայր Լուսաւորչին Գրիգորի տուժի ի տարտարոսի սակս անմեղ սպանմանն թագաւորին իւրոյ Խոսրովու և վասն կռապաշտութեանն, իսկ որդի նորին Լուսաւորիչն ի վեր քան զՔերովբէս պատուի և մեծարի փառօք: Հետևապէս Դաւիթ հայրն Աբեսողոմայ վայելէ զմարգարէական և զաստուածապաշտութեանն իւրոյ զփառս: Եւ որդի նորին Աբեսողոմն տանջի ի դժոխս սակս խայտառակութեան և յանդուգն արարմանց ընդ հարճից հօրն և մանաւանդ յաղագս ընդդիմութեան այն մեծի, զոր արարն ընդդէմ ծնօղին, թէպէտ և գոն այսպիսիք բազումք, զորոց և երկարանամք ի ճառելն: Իսկ եթէ ցուցանին մեզ այսոքիկ գոլ իրաւունք, ուրեմն ոչ պարաւանդին հոգիք մարդկայինս սեռի մեղաց նախահօրն, ուրեմն և այլն:

Պատասխանի. Թէպէտ հոգիք զաւակացն ոչ փառաւորին կամ պատժին ըստ արդեանց ծնօղացն, սակայն որովհետև Ադամն էր սկիզբն և արմատ և ծայրագոյն աղբիւր բոլոր մարդկայինս սեռի, վասն որոյ, եթէ պահեալ էր նոյն սկիզբն և ծայրագոյն աղբիւրն զհրամանն Աստուծոյ և զանմեղութիւնն, թարց երկբայութեան իմիք տարածիւր զայն բարութիւնն առ ամենայն ծնունդս իւր թարց պատճառաց: Իսկ որովհետև լինէր յայնժամն ծնունդք նախահօրն ժառանգ բարութեան հօրն, ուրեմն ի յապստամբիլն և մեղանչիլ ծնօղին պարտ էր և ծնընդոց նորին լինել ժառանգ պարտաւորութեանն և այլն:

Ընդդիմութիւնք. Տացուք թերևս ըստ քումդ եզրակացութեան ասել, թէ որովհետև Ադամն էր նախկին աղբիւր և արմատ հանուրց ծնընդոց իւրոց, ուստի և պարտ իսկ էր որդոցն լինիլ ժառանգ ծնօղին իւրեանց թէ բարեացն և թէ պատժոց, սակայն որովհետև տեսանի, թէ հոգիք ծնօղացն*. իսկ եթէ հոգիք զաւակացն ոչ սերին ի ծնօղացն, ուրեմն և ոչ որդիքն Ադամայ առին զգոլ հոգոցն իւրեանց ի յԱդամայ, այսինքն՝ ի նախկնոյ արմատոյն ամենից մարդկանց: Իսկ եթէ ոչ առին ի ծնօղէն իւրեանց Ադամայ, ուրեմն և ոչ առին զսպին մեղանչման ի հոգոյ ծնօղէն իւրեանց: Վասն զի մեղանչումն եղև ի հաւանութենէ բանական զօրութեանն, այսինքն՝ ի հոգոյն, ուրեմն և ոչ ոք կերպիւ կարէ անցանել աղտ հոգոյն Ադամայ ի հետևեալ ծնունդս իւր, վասն զի ոչ հաղորդեցաւ հոգի նախահօրն ընդ հոգոց զաւակացն, ուրեմն և այլն:

Եւ դարձեալ ոչ միայն Ադամն կարէր լինել աղբիւր արմատ ծնընդոց իւրոց որուցէս**, Աբրահամ, Յակոբ, մանաւանդ թէ Նոյ և որդիք իւր, վասն զի

---

* Ըստ երևույթին գրիչն ընդօրինակելիս մի քանի բառ բաց է թողել:

** Ակնհայտ վրիպակ է: Գուցե կարդալի է՝ որդւոց՝ Մօսէս:

յաւուրս հեղեղին մեծի Նոյ միայն եթէ մնացեալ իցէր, կարօղ էր և Նոյ լինիլ ծայրագոյն աղբիւր ամենից մարդկանց և կոչիլ նախահայր ամենից մարդկանց: Ուրեմն ի մեղանչիլ կամ ի յարդարանալն Նոյի արդարանալ կամ մեղանչել պարտ էին և ծնընդոց նորին, զոր ոչ եղև այսպէս մանաւանդ, թէ զհակառակն, վասն զի Քամ որդի Նոյի մեղանչեաց և ընկալաւ զանէծս Քանան փոխանակ հօրն, սակայն ի յօրհնելոյն Նոյի ոչ եղեն ժառանգ օրհնութեան որդիքն նորա: Այլ Նոյ մնաց օրհնեալ յԱստուծոյ և երկրորդ նախահայր ամենից մարդկանց: Ուրեմն որպէս և հետևեալ զաւակքն Նոյի և կամ իւրաքանչիւր ծնօղացն ոչ լինին մասնակից և հաղորդ բարեգործութեան կամ ամբարշտու[թեան] հոգւոց ծնօղացն, նմանապէս և որդիքն Ադամայ ոչ են ժառանգորդք ներգործութեան հոգւոյն Ադամայ, ուրեմն և ոչ հետևի սերիլ ի մեզ մեղն սկզբնական, ուրեմն և այլն:

Պատասխանեմ և ասեմ, թէ զի թէպէտ հոգիք զաւակաց նախահօրն ոչ ենթագոյացան ի հոգւոյ ծնօղին, սակայն նախահայրն այն էր գոյացեալ ի հոգւոյ բանականէ և ի մարմնոյ զգայականէ, իսկ որովհետև հետևեալ զաւակքն եղեն և տակաւին ունին բոլորովիմբ գոյացութիւն նախահօրն, ուրեմն մեղանչումն այն, զոր յառաջ եկն ի բոլորէ մարդոյն Ադամայ, պարտ էր ուրեմն, զի և տարածիցիւր ի համանման ծնունդս իւր հարկաւորապէս: Եւ այս յառաջարկութիւնս մեր ցուցանի և ի ձեռն յարացուցի, վասն զի տեսանեմք, թէ աճողական զօրութիւնն, որ գոյ ի տունկս և ի բոյսս, գոյ և ի յզգայականում զօրութենում հասարակ կենդանեացն, զոր թէպէտ զանազանին աճողականութեան զօրութիւնն և զգայականութիւնն ի միմեանց բազում տարբերութեամբ, զոր եթէ ոչ էին զանազանեալ և բաժանեալ գոյացութիւնք, ուրեմն ոչ կարէին բաժանիլ ի միմեանց, մինչ զի մինն կարիցէր գոլ միայն ինքեամբ և լինիլ ի տունկս և ի բոյսս և միսն՝ ի կենդանիսն առանձնաբար, սակայն տեսանի, թէ ի շարազուգումն երկոցունցն առ մի ենթադրութիւն այնպէս ունին զինքեանս առ միմեանս, մինչ զի եթէ բարձցի մինն, ոչ կարէ մնալ միսն՝ ո՛չ աճողականութիւնն թարց զգայական զօրութեանն և ոչ անդրադարձեալ: Նմանապէս և ասելի է, թէ և վասն իմանալի զօրութեան հոգւոյն, զոր թէպէտ է իմն իմանալի զօրութիւն և յոյժ տարբերի ի յզգայական և յաճողական զօրութենէն, սակայն ի շարազուգումն ի մի ենթակայութիւն այնպէս ունին զինքեանս առ միմեանս, մինչ զի եթէ աճի տնկականն և զգայականն, ընկերակցէ և բանականն, նմանապէս յորժամ պակասին սոքայ երկոքեանս, համանգամայն չուէ ի նմին տաղաւարէ և բանականն և մնա մերկ ի յերկուց ասացելոց զօրութեանցն: Վասն զի մի միայն հոգին է, որ ներգործէ զերիս զօրութիւնս՝ թէ՛ զաճողականութիւնն, թէ՛ զգայականութիւնն և թէ՛ զբանականութիւնն: Նմանապէս մի միայն զգայական հոգին է, որ ներգործէ ի յայլ կենդանիսն՝ զգայականն և թէ զաճողականն, ուրեմն և այլն:

Եւ դարձեալ տացուք ցուցանել և ի ձեռն բացագոյն յարացուցի և պատճառաց ասելով, թէ եթէ ոմն սոսկ կենդանի նախաստեղծ իբր առաջին ստեղծեալ առիւծն կամ գայլն մեղանչիցէր եթէ և համարիցիւր ի մեղս: Եւ հետևապէս որդիք կենդանոյն այնորիկ ոչ յառաջ ածիցէին ի կենդանական զօրութենէ հօրն, այլ միայն ի յաճօղականութենէ զօրութենէ նորին, ասեմ, թէ և պարտ էին որդիք կենդանոյն այնորիկ կցորդիլ մեղանչման ծնօղին իւրեանց, թէպէտ կենդանականաւն: Վասն զի թէպէտ ոչ ենթագոյացան ի կենդանական զօրութենէ և զգայականութենէ հօրն, սակայն պարաւանդէին

կցորդիլ ծնօղին իւրեանց հարկաւորապէս: Նախ՝ զի որովհետև ոչ կարեն որդիքն համանմանիլ հօրն բնութեամբ և տեսակաւ, եթէ ոչ ունիցին զբոլոր էութիւն և ներգործութիւն ծնօղին, թէպէտ առեալք իցեն ի հօրէն զաճողականութիւնն և ոչ զգայական զօրութիւնն: Իսկ որովհետև հարկաւորին համանմանիլ ծնօղին իւրեանց իսկապէս, ուրեմն և պարաւանդին լինիլ բնութեամբ և ներգործութեամբ հօրն, թէպէտ չիցեն առեալ զգոյացութիւն բնութեանն ի ծնօղէն: Երկրորդ. որովհետև ի բաց բարձումն զգայականութեան հօրն, զոր ոչ առին որդիքն, տեսանի և ընդ նմին բառնիլ և աճողականին, զորս առինն ի ծնօղէն: Հետևի ուրեմն, թէ մինչ տիրեալ եղև կենդանական զօրութիւն հօրն, այսինքն՝ առիւծոյն ի բարկութենէ պատառող բնութեան իւրոյ, զոր ոչ առին կորիւնքն ի հօրէն զայս զօրութիւնս, սակայն տեսանի, թէ և կորիւնք նորին տիրեալ գտանին և իշխինն ի նոյն պատառիչ բարկութենէ կենդանական զօրութեանն թարց տարակուսի: Իսկ արդ՝ սոյնպէս և սոյն օրինակաւ ասելի է և վասն զօրութեան բանականի մասինն մարդոյն, զոր թէպէտ ոչ առին որդիք նախահօրն ի գոյացութենէ ծնօղին, սակայն ամենայն իրօք պարաւանդին որդիքն համանմանիլ ծնօղին իւրեանց թէ՛ բնութեամբ, թէ՛ ներգործութեամբ և թէ՛ տեսակօք թարց երկբայութեան: Ուրեմն ամենայն իրօք հարկաւորին որդիք նախահօրն կցորդիլ ծնօղին իւրեանց թէ մաքրութեանն և թէ աղտիցն: Եւ դարձեալ ասելի է, թէ, զի թէպէտ Նոյրն և կամ Աբրահամն և իւրաքանչիւր ծնօղ կարէ լինիլ սեռ և արմատ հետևեալ ծնընդոց իւրոց, սակայն ո՛չ ծայրագոյն, վասն զի մինչ ծայրագոյն արմատ և աղբիւր ամենից մարդկան էր Ադամն միայն և ոչ այլ ոք, ուրեմն ոչ ոք կարէր լինիլ նախահայր հետևեալ ծնընդոցն իւրոց, վասնզի Աբրահամն յառաջ եկն ի Թարայէ և Թարայ՝ ի Նաքորայ և այսպէս գնալով ի Նոյէ ցԼամէք և ի Լամեքայ այլ նախահայրք և մինչև ցԱդամ, իսկ ի յԱդամայ ոչ ոք, ուրեմն բաց ի յԱդամայ աղբիւր և արմատ մարդկութեանս ոչ ոք, այլ միայն Ադամն: Արդ եթէ սա՛ է ծայրագոյն նախահայրն, ուրեմն զոր ինչ էրն յառաջ քան զարտադրիլըն զորդի, նմանապէս և յառաջ գալ պարտ էին զաւակացն, որպէս և արմատն իւրեանց ունէր զգոյացութիւնն իւր՝ թէ պարզ և թէ պղտորեալ: Եւ առ ցուցումն եզրակացութեանս ասելի է, թէ, զի թէպէտ բազում պատճառելիք ունին զգոլն իւրեանց ի յերկուց կերպից պատճառաց, զորս բաժանին ի յանձայր և ի ծայրագոյն: Վասն զի թէպէտ տարերք և մոլորակք, օդք և ջուրք, կերակուրք և պտուղք են ևս պատճառք լինելութեան և գոյացութեան էիցս ստորնայնոց, զորոց թարց ներգործութեանն սոցա ո՛չ ենթագոյանայ ինչ ի յզգալիսս և ի տնկականս: Սակայն սոքայ են անձայրք պատռճառք ստորնայնոցս և ոչ ծայրագոյն: Վասն զի և իբրև որոնեալ նկատեմք, յայնժամն տեսանի, թէ կերակուրք յառաջ գան ի հողոյ և ի խոնաւութենէ ջուրց և սոքայ՝ ի մոլորակաց ազդեցութենէն և սոքա՝ ամենայն շարժմունք ի յանշարժ շարժոէ, որ ոչ ունի այլ ինն գեր ի վերոյ պատճառ քան զինքն, յայնժամն դադարի ծայրագունութենէ պատճառն ի յանշարժ շարժօղն և ոչ ի յայլ ոք: Հետևի ուրեմն, թէպէտ Նոյրն և կամ յիւրաքանչիւր հայր կարէ լինիլ սեռ և արմատ ծնընդոցն իւրեան, որպիսի է Հերակլն, Իսրայէլն, Շէրիմանն կամ Բասիլիոսն, որ է նախնին իմ: Սակայն սոքայ առհասարակք և կամ այլոք են արմատք և աղբիւրք թերևս, սակայն ոչ ծայրագոյն, այլ յանձայր, հետևապէս և ոչ վերաձայնել կարեմք զնոսա նախահայր և կամ գոլ ծայրագոյն հայր և պատճառ մարդկային ծնընդոցս, վասն զի և հայրս այս յառաջ

եկն ի յայլմէ հօրէ և հայրն այն, ի յայլմէ ումեմնէ և այսպէս յառաջ ընթանալով ժամանեմք մինչև զԱդամն: Եւ իբր տեսանեմք, թէ Ադամն ոչ ունի զպատճառ ծնընդեան իւրոյ ի յայլմէ, յայժմն մնայ ծայրագոյն հայրութիւնն և պատճառ մարդկային ծնընդոցս ի Ադամա և ի յԱդամում: Իսկ եթէ է Ադամն, ուրեմն զոր ինչ ունէր Ադամն ժառանգ նորին, եղեն հետևեալ որդիքն: Հետևեալ որդիքն ասացի, վասն զի եթէ Ադամն ի յանմեղութենէն ծնեալ իցէր զառաջին զաւակն Կայէն և յետ այնորիկ մեղանչիցէր և զկնի մեղանչմանն ծնանիցէր զԱբելն, ասեմ, թէ ոչ պարաւանդէին որդիք Կայենի լինիլ ժառանգորդ մեղանչման նախահօրն, վասն զի ոչ առին զարիւնն պղտորեալ ի ձեռն մեղանչման ի հօրէն նախնոյ և ոչ անդրաքայլէր պատիժն այն կամ հասանէր առ ծնունդն այն, զոր ի յանմեղութենէն ծնաւ, թերևս կարելի էր, եթէ Աբելն և ծնունդք իւր պարաւանդէին առ պատիժ մեղանչմանն, վասն զի ի վտակէ և յաղբերէ դառնացելոյ անջատեցան, վասն որոյ և լինէին դառնացեալք: Իսկ որովհետև յետ մեղանչման ծնաւ զորդիս և հետևապէս Ադամն էր ծայրագոյն հայր և ծնօղ ամենից մարդկան, ուրեմն զոր ինչ էր Ադամն նախքան զծնանելն, նոյն կերպիւ և պարտ էին ծնանիլ և որդոցն՝ թէ բծաւոր և թէ անբիծ, ուրեմն և այլն:

Ընդդիմութիւնք. մեղանչումն Ադամայ տացուք թերևս, թէ եբեր զպատիժս թէ ի վերայ ինքեան միայն և թէ ի վերայ բոլոր ծնընդոցն իւրոց, որպէս և ասեսն: Սակայն տեսանի, թէ պատիժ մեղանչմանն ընկալաւ ինքն միայն ի յարարածոց, երրորդ գլուխն և ի 17 համարն, ըստ այնմ, թէ անիծեալ լիցի երկիր ի գործս քոյ, տրտմութեամբ կերիցես զնա ամենայն աւուրս կենաց քոց, փուշք և տատասկք բուսուսցէ քեզ և կերիցես զբանջար վայրի, քրտամբ երեսաց քոց կերիցես զհաց քոյ մինչև դարձցիս ի յերկիր, ուստի առար, զի հող էիր և հող դարձցիս և այլն: Եւ յասացելոցս յայտ է, թէ պատիժ մեղանչմանն այս էր, զոր ընկալաւ Ադամն, զոր և ընդունակ եղև այսքան անիծիցս, նմանապէս և կրին պատիժքս այսոքիկ ի հասարակ ծնընդոց նորին: Ուրեմն ոչ մնայ այլ իմն պատիժ և ոչ ընթեռնանի ի գիրս սուրբս այլ իմն պատիժ և կամ անէծք, զորս ստորոգիցիւր ի վերայ նախահօրն, 7 ուստի կարասցես անուանել զնա՛ մեղ սկզբնական, սերեալ ի նախահօրէն, քան զորս ասացաքն, ուրեմն և այլն:

Պատասխանի, թէ Ադամն էր գոյացեալ ի մարմնոյ զգայականէ և ի հոգւոյ բանականէ: Եւ ոչ թէ միայն սոսկ զգայականաւն արար զմեղս, զոր ասել կարիցես, թէ որով մեղանչեաց, նովիմբ և պատուհասեցաւ: Ուրեմն ոչ եղև բաւական քոյին առբերեալ պատիժքն լինիլ հակակշիռ մեղանչմանն: Մանավանդ, թէ Ադամն մեղանչեաց գիտութեամբ և ի ձեռն ազատ ընտրութեանն, այսինքն՝ բանականին, վասն որոյ և պարտ էր կրել զպատիժն այնու մասամբքն, որով և եղեն առիթք մեղանչմանն: Իսկ որովհետև տեսանի, թէ մինչ ոչ գործէ մարդն զմեղ ինչ թարց հաւանութեան և կամաց բանականութեան մասինն, ոչ ոք կերպիւ համարի մեղս, եթէ ոչ բանական զօրութիւնն ենթադատիցէ զիրն գոլ՝ թէպէտ խոտելի, սակայն ի ստոր և դնիցէ զազատ ընտրութիւնն ընդ զգայական ցանկութեանն և տացէ զհաւանումն, որով գործն մեղանչման: Ուրեմն և Ադամն, եթէ թարց հաւանութեան բանականին ձգիցէր զձեռն և առնուցոյր ի կնոջէն զպտուղն և կամ ուտիցէր, ասեմ, թէ ոչ ոք կերպիւ համարելի էր նմա՛ ի մեղս: Եւ այս ցուցանի ի ձեռն ապացուցութեանն, վասն զի որոյ կենդանոյ վերայ դնիցես զբանականութիւնն, յայն-

ժամն կենդանին այն ասի կենդանի բանական, գիտութեան և յանճարոյ ընդունակ իբրև զմարդ, թէպէտ և լինիցի տարբերականաւ տեսակաւ ի մարդոյն: Եւ յայնժամն կենդանին յայն, որ է բանական, եթէ յանցանիցէ զպատուիրանօքն Աստուծոյ և կամ հրամանօք իշխանաց և թագաւորաց աշխարհիս այսորիկ, պատժի և տուժի թարց երկբայութեանց և տարակուսանաց: Բայց յորժամ ի բաց բառնայցես զբանական զօրութիւնն ի կենդանոյն յայնմանէ և լինիցի սոսկ կենդանականաւ զօրութեամբ, որպիսի է եզն, առիւծն, գրաստն, յայնժամն, եթէ յաւուր միուն առնիցէ հազարիցս զզրկողութիւն, յափշտակութիւն, զանկարգ զցանկութիւն և զայլս անպատեհս, զորս զսպէ բանական զօրութիւնն, սոքայ ամենեքեանքն ոչ է համարելի ի մեղս ոչ ի կողմանէն Աստուածոյ և ոչ ի կողմանէ թագաւորաց և իշխանաց աշխարհիս այսորիկ: Ուրեմն և Ադամն, եթէ ոչ ունիցէր զբանականութիւնն, որով ի ձեռն նոյնոյ բանականութեանն յանցանիցէր զպատուիրանօքն Աստուծոյ, նմանապէս և ոչ ոք կերպիւ պարաւանդիւր կրել զպատիժս: Եւ կամ համարելոց էր ի մեղս յանգոյն այլոց կենդանեացն, իսկ որովհետև Ադամն էր ոչ սոսկ կենդանի և զգայուն, այլ և՛ բանական և՛ իմանալի գոյացութեան ընդունակ, վասն որոյ ի ձգել զձեռն և առնուլն ի կնոջէն զպտուղն համարեցաւ ի պատուիրանազանցութիւն և ի մեղս, վասն զի ի ձեռն բանականին յանցեաւ զպատուիրանօքն և ոչ ի ձեռն սոսկ կենդանականի զօրութեանն, զոր թէպէտ կենդանական զօրութիւնն դրդեաց և շողոքորթել ետ բանականութեանն մինչ զի զգայականի ցանկութեան և ախորժակին ստորև քարշեաց զազատ ընտրութիւնն, զոր Աստուած եդ և հաստատեաց զբանական զօրութիւնն իշխող և կառաւարիչ զգայական և կենդանական զօրութեանն առ ի սանձել և ընդ հնազանդութեամբն իւրով ստորադրել զամենայն զկամս և զախորժակս զգայականութեամբն և ոչ անդրադարձեալ, սակս որոյ այնպիսի արարողութիւնն Ադամայ համարեցաւ ի մեղս և պարաւանդեաց զնա՛ ի պատիժ յանցանացն: Յասացելոցս հետևի, թէ մեղանչումն Ադամայ և ծնընդոց նորին և յառաջ ածին ի բանականութենէ և ի գիտութենէն, ուրեմն և պատիժն պարտ էր պարաւանդել զբանականութիւն և զիմանալի զօրութիւն Ադամայ և ծնընդոց նորին և ոչ միայն կենդանական զօրութիւնք և զգայականութիւնք նոցին, որք եղեն կերպիւ իմն առիթք յանցանացն: Վասն զի ի վեր անդր առբերեալ պատիժքն, զորս բերեալն եղև ի գրոց սրբոց, ե[ն] պատիժք, որք ստորոգին ի վերայ կենդանական զօրութեան մարմնոյն, որ է փոքրագոյն (և թերևս ամենևին)* առիթ յանցանացն և ոչ պատիժք հոգևորք, զորս կարիցեն ստորոգիլ ի վերայ բանականութեանն, որ է ամենևին պատճառ և իսկապէս առիթ պարտաւորութեան և մեղանչմանն: Ուրեմն սակս շողոքորթութեան և դրդրդութեան կենդանականի մասինն, որով պատրեաց զբանականութիւնն, ընկալաւ ի Տէառնէ զպատիժս զգալիս ըստ այնմ: Անիծեալ լիցի երկիր ի գործս քոյ, տրտմութեամբ կերիցես զնա զամենայն աւուրս կենաց քոց, փուշ և տատասկ բուսուսցէ քեզ, հող էիր և հող դարձիր և զայլսն ըստ կարգին, թէ առ յԱդամն և թէ առ ի Եւայ՝ կինն նորա, որք սոքայ են պատիժք զգալիք ընդ փոխարինի դրդողութեան կենդանականի զորութեանն: Ուրեմն ոչ էր բաւական պատիժն կենդանականի մասին հակակշիռ

* Փակագծերը նշանակում են, որ տվյալ հատվածը ջնջված է, այսինքն՝ չկարդալ:

լինիլ և քաւել զպատիժն մեղանչման, որ ի ձեռն ազատ ընտրութեանն, այսինքն՝ բանականին գործեցեալ եղև, իսկ որովհետև մեղանչեաց Ադամն երկոքումբքն, ուրեմն և պարտ էր նմա՛ պատժիլ երկոքումբքն, որպէս է տեսանել ի գիրս սուրբս, վասն զի և երկոքումբքն պատժօք դատապարտեաց զԱդամն, ուստի և վասն զգայականօք մեղանչմանն թէպէտ ետ զվճիռն ժամանակաւոր, որպէս ի վեր ճառեցաւ, սակայն վասն իմանալեօք մեղանչմանն հրամայեաց Աստուած ի յարարածոց երկրորդ գլուխն և ի 17 յամարն, թէ ամենայն ծառոց, որք են ի դրախտիդ, ուտելով կերիցես, բայց ի ծառոյն գիտութեան մի ուտիցէք, վասն զի որում աւուր ուտիցէք ի նմանէ մահու մեռանիցիք և այլն: Այլ արդ տեսանի ըստ պարզ միտ առման, թէ Ադամն և կինն իւր առին և կերան ի ծառոյն յայնմանէ և յետ ուտելոյն մնացին կենդանիք զբազում ժամանակս, զոր և Ադամն եկաց մինչև ցինն հարիւր և երեսուն ամն և ապա՛ մեռաւ: Ուրեմն կամ Աստուած սրտեաց զբանն իւր, զոր ասաց, թէ յաւուր, յորում ուտիցէք, մահու մեռանիցիք և կամ համանգամայն ի յուտելն մեռան ըստ բանի տեառն թարց ծնանելոյ զորդի և սուտ է այն, զոր ցուցանէ մեզ Աստուածաշ[ու]նչն, թէ զկնի մեղանչմանն մնաց կենդանի մինչև ց930 ամն և հետևապէս սուտ է այն, զոր բովանդակ ազգք զինքեան գոլ և սերիլ ասեն ի նախահօրէն Ադամայ և այլն: Սակայն տեսանի, թէ Աստուած ոչ կարէ ստել և ոչ ևս յայնժամն սրտեաց համանգամայն և տեսանի, թէ և ոչ մեռաւ Ադամն ի նմին աւուր, որպէս պատուիրեալ ասաց: Իսկ արդ, զինչ պարտիմք իմանալ, ուրեմն յայնմ աւուր մեռանիլն Ադամայ և կնոջն իւրոյ, եթէ ոչ մասամբ բանականին, վասն զի թէպէտ ի նմին աւուր մեղանչմանն ընկալաւ զպատիժս մեղանացն զգայականութեանն զգայականաւն և յայտնի սակայն համանգամայն և ընկալաւ զպատիժ մեղանաց բանականութեանն բաւականութեամբ մեռանելով նոյնոյ բանականութեանն ի ծածուկ ըստ անսուտ խոստմանն և հրամանի տեառն, թէ յաւուր, յորում ուտիցէք ի նմանէ մահու մեռանիցիք, այսինքն՝ հոգով: Ուրեմն յաւուր, յորում յանցեաւն Ադամն ընկալաւ ի տեառնէ զվճիռ իմանալի մասին զմահ, այսինքն՝ զմեռելութիւն հոգւոյ համանգամայն և զպատիժ զգայականի մասինն ըստ այնմ, թէ հող էիր անդրէն և ի հող դարձցիս ըստ մարմնոյ: Ուրեմն այս երկու պատիժքս պարաւանդեցին զնախահայրն տուժիլ հարկաւորապէս: Իսկ եթէ պարտական եղև նախահայրն երկոքումբք մասամբքս, որպես և յառաջի աչաց* եդաք, ուրեմն որպէս և փոխարէն յանցանացն զգայականութեան ընկալաւ նախահայրն զպատիժն զգայական ինքն և ամենայն ծնունդք իւր յայտ և յանդիման, նմանապէս և փոխարէն յանցանաց բանականութեանն ընկալաւ նախահայրն զպատիժս հոգևորս. ըստ այնմ, թէ յաւուր, յորում ուտիցէք ի նմին աւուր մահու մեռանիցիք մեռանել ինքն և ամենայն ծնունդի իւր հոգևոր մահուամբ, սակայն աներևութապէս և ի ծածուկ, ուրեմն և այլն: Եւ բաւականասցի ի փառս մեծին Աստուծոյ: Վերջ:

* Ձեռագրում գրված է՝ յառաջ խաչաց: Ակնհայտ է, որ վրիպակ է:

Ցանկ
տեքստում գործածված պարսկերեն բառերի և բառակապակցությունների*

Զաբուր - Սաղմոսարան
Ըղրար - խոստովանություն
Հազրաթ - սուրբ
Հազրաթի ռսուլ - սուրբ առաքյալ
Ղուրբան - զոհ, մատաղ, ողջակեզ
Նապի հոլլահ - Աստծո մարգարե
Նապիհոլլահություն - Աստծո մարգարեություն
Զովհար - ազնիվ, պատվական
Ռսուլ - առաքյալ
Սեֆի հոլլահ - Աստծո ընտրյալ
Սեֆիհոլլահություն - Աստծո ընտրյալություն
Փեյղամբար - մարգարե
Փեյղամբարան - մարգարեներ
Փեյղամբարություն - մարգարեություն
Քալամա - բառ, խոսք

Г. К. МИРЗОЯН — ***Неизданные "полемические беседы" Степаноса Даштеци.*** — Видный армянский книжник 17-18 вв. Степанос Даштеци, всю жизнь занимаясь торговой деятельностью, бывал во многих странах Азии и Европы, в среде различных народов, знакомился с их обычаями и нравами, не раз, что естественно, вступая при этом в беседы или полемику по тем или иным философским, религиозным, этическим, эстетическим и житейским вопросам. Все это впоследствии было записано им в виде семи "полемических бесед", хранящихся ныне в собрании рукописей армянского патриаршества Иерусалима (N 436). Автор публикации имел возможность снять копию с рукописи, три из бесед ранее им опубликованы, четыре другие публикуются ныне. Они, во первых, существенно обогащают наши представления как о самом Степаносе Даштеци, так и о неизвестных доныне сторонах деятельности армянского (и не только) купечества. Во-вторых, они содержат чрезвычайно интересные сведения об армяно-персидских культурных отношениях, что очень важно в настоящее время, на современном этапе диалога культур.

---

* Առանձին դեպքերում նկատվում է գրության անճշտություն: